

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

HISTORY

ИСТОРИЯ

ԳԱԳԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԾԱՆԵՐԸ ՀԱՅ-ՄՈՆԴՈԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Կիլիկյան Հայաստան, Իրանի մոնղոլական Իլխանություն, պաշտոնական նամակագրություն, Մուհամմադ իբն Հինդուշահ Նախավանի, բանագնացներ, թարգմանիչներ, դիվանագիտական նվիրաբերում:

Ա. Կիլիկյան Հայաստան–Իրանի մոնղոլական Իլխանություն պաշտոնական գրագրության վերաբերյալ տեղեկությունները.

Պաշտոնական գրագրության և քարտուղարության մամուլային ձեռնարկները և պատմական երկերը Կիլիկիո հայոց թագավորության և հարակից մուսուլմանական պետական կազմավորումների միջև դիվանագիտական նամակագրության ուսումնասիրության համար կարևորություն են ներկայացնող միակ սկզբնաղբյուրները չեն¹: Մեզ է հասել ԺԴ դարի պարսկալեզու մի կարևոր հուշարձան ևս, որը որոշ պատկերացում է տալիս այս դեպքում արդեն Իրանի մոն-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.թ., gagidaniel@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ փետրվարի 9, 2022, գրախոսելու օրը՝ ապրիլի 20, 2022:

¹ Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի ու Ասորիի Մամուլյան սուլթանության բարձրագույն ֆառաֆական իշխանությունների միջև դիվանագիտական նամակագրության, դեսպանականության արտոնականության և դիվանագիտական նվիրաբերման թեման ուսումնասիրել են մեր արդեն հրատարակված և կամ հրատարակության հանձնված հոդվածներում: Տե՛ս **Գ. Դանիելյան**, «Հայ-մամուլեան դիվանագիտական նամակագրությունն ըստ ալ-Ումարիի, Իբն Նադիր ալ-Ջալի և ալ-Կալկաշանդիի ձեռնարկների», *Բազմալեզու*, 2016, № 2, էջ 44-98, **նույնի**՝ «Դիվանագիտական ընթաները հայ-մամուլյան հարաբերություններում», *Բազմալեզու*, 2021 (հանձնվել է հրատարակության) **նույնի**՝ «Եգիպտոսի և Ասորիի սուլթանից Կիլիկիո հայոց արքային ուղղված երկու վավերագիր՝ ըստ Շիհաբ ալ-Դին ալ-Հալաբիի *Husn al-tawaşşul* երկի և նորահայտ սկզբնաղբյուրային փաստերի», *Journal of the Society for Armenian Studies*, vol. 28, 2021 (հանձնվել է հրատարակության):

ղղական Իլխանության (1256-1335 թթ.) և հայոց թագավորության բարձրագույն իշխանությունների նամակագրության մասին: Խոսքը Շամս ալ-Դին Մուհամմադ իբն Հինդուշահ Նախչավանիի (հայտնի նաև Շամս Մուհալի անունով, մահ. 1376 թ.) *Dastūr al-kātib fī ta'yīn al-marātib* («Գրագրի ուղեցույցը [պաշտոնական] աստիճանների սահմանման համար») վերնագիրը կրող քարտուղարության ձեռնարկի մասին է²:

Մինչև սույն հեղինակին և նրա աշխատությանն անդրադառնալը, հարկ ենք համարում մատնանշել Իլխանության և մյուս մոնղոլական ուլուսների դիվանատների աշխատանքի և այնտեղից դուրս եկած փաստաթղթերի վերաբերյալ արդեն իսկ կատարված կարևորագույն ուսումնասիրությունները: Մոնղոլական պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրմամբ եվրոպացի հետազոտողները սկսել են զբաղվել դեռ Ժ. Գարի կեսերից: Մոնղոլ խաների և Հռոմի պապության նամակագրության մեզ հասած լատիներեն վավերագրերի ուսումնասիրության առաջամարտիկը գերմանացի լյութերական աստվածաբան Յոհանն Լորենց Մուհեյմն (մահ. 1755 թ.) էր իր *Historia Tartarorum Ecclesiastica* աշխատությամբ³: Այնուհետև ոլորտում իրենց հատկանշական ավանդն են բերել Ժ.-Պ. Աբել-Ռեմյուսան, Փ. Փելլիոն, Ֆ. Վ. Կլիվզը, Ա. Մոստերը և այլք⁴ հետազոտության

² **Muhammad ibn Hindušāh Nahğawānī**, *Dastūr al-kātib fī ta'yīn al-marātib* / **Мухаммад ибн Хиндушах Нахчивани**, *Дастур ал-ка̄тиб ф̄и та'й̄ин-ал-марāтиб* (Руководство для писца при определении степеней), 2 т., крит. текст, предисл. и указатели А. А. Али-заде, Москва, 1964-1971, որն ընդգրկում է երկի ֆննական պարսկերեն բնագիրը՝ առանց քաղցրամանրյան:

³ **J. L. Mosheim**, *Historia Tartarorum ecclesiastica*, Helmstad, 1741.

⁴ **J.-P. Abel-Rémusat**, «Mémoires sur les relations politiques des princes chrétiens, et particulièrement des rois de France, avec les empereurs Mongols», *Mémoires de l'Institut de France*, t. 6, 1822, p. 396-469, t. 7, 1824, p. 335-438, **R. Bonaparte**, *Documents de l'époque mongole des XIIIe et XIVe siècles*, Paris, 1895, **И. Ю. Ключин**, *О чем писал иль-хан Арзун Филиппу Красивому в 1289 г. (К разбору древнейших памятников монгольской письменности)*, Владивосток, 1925, **P. Pelliot**, «Les documents mongols du Musée de Téhéran», in *Athar-é Irān: Annales du service archéologique de l'Iran*, T. 1, Fasc. 1, 1936, p. 37-44, **Ինչպես նաև ճոյնի**՝ «Les Mongols et la papauté», *Revue de l'Orient chrétien*, t. 23, 1922-1923, p. 3-30, t. 24, 1924, p. 225-335, t. 28, 1931-1932, p. 3-84, **E. Voegelin**, «The Mongol orders of submission to European powers, 1245-1255», *Byzantion*, vol. 15, 1940-1941, pp. 378-413, **Eu. Tisserant**, «Une lettre de l'Ilkhan de Perse Abaga adressée en 1268 au Pape Clément IV», *Le Muséon*, t. 59, 1946, p. 547-556, **E. Haenisch**, «Zu den Briefen der mongolischen Il-Khane Argun und Öljeitü an den König Philipp den Schönen von Frankreich (1289 u. 1305)», *Oriens*, vol. 2, № 2, 1949, pp. 216-235, **F. W. Cleaves**, «A Chancellery Practice of the Mongols in the Thirteenth and Fourteenth Centuries», *Harvard Journal of Asiatic Studies* (հետալստ՝ HJAS), vol. 14, № 3/4, 1951, pp. 493-526, **ճոյնի**՝ «The Mongolian Documents in the Musée de Téhéran», *HJAS*, vol. 16, № 1/2, 1953, pp. 1-107 **ճոյնի** և **A. Mostaert**, «Trois documents

ծիրի մեջ առնելով նաև լատին Արևմուտքի հոգևոր և աշխարհիկ միապետների հետ մոնղոլ խաների նամակագրության պահպանված մոնղոլերեն և պարսկերեն բնօրինակները կամ էլ պատմական սկզբնաղբյուրներում պահպանված ընդօրինակությունները՝ ընդհանրացնելով մոնղոլական ուլուսների դիվանատների աշխատանքի բնույթն ու պաշտոնական գրագրության վարման հիմնական սկզբունքները: Տարիներ առաջ, օրինակ, Մ. Բիրանը պահպանված սակավ վավերագրերի և սկզբնաղբյուրային փաստերի հիման վրա ի մի է բերել միջինասիական Չաղաթայի խանության (1226–1348) դիվանատան աշխատանքի վերաբերյալ տվյալները⁵: Յուան հարստության (1260–1368) հիմնադիր խան Ղուբիլայի դիվանագիտական նամակագրության հռետորաբանությունն է հետազոտել Ֆ. Ֆրասկետտին⁶:

Մամլուքյան սուլթանների հետ Իրանի մոնղոլ իլխանների փոխանակված մի շարք նամակների ընդօրինակություններ և դրանց արաբերեն քաղվածական թարգմանություններ են պահպանվել մամլուքյան պատմագրության երկերում,

mongols des Archives secrètes vaticanes », *HJAS*, vol. 15, № 3/4, 1952, pp. 419-506, ինչպես նաև կրկիներկուսի համահեղինակությամբ՝ *Les lettres de 1289 et 1305 des ilkhan Arghun et Öljeitü à Philippe le Bel*, Cambridge (MA), 1962, **P. Meyvaert**, “An unknown letter of Hulagu, Il-Khan of Persia, to king Louis IX of France”, *Viator*, vol. 2, 1980, pp. 245–259, **K.-E. Lupprian**, *Die Beziehungen der Päpste zu islamischen und mongolischen Herrschern im 13. Jahrhundert anhand ihres Briefwechsels*, Vatican, 1981 (մեզ համար անհասանելի է եղել) **J. Richard**, « La lettre de Hülegü à Saint Louis et l'entente avec les Mongols », dans *J. Richard, Au-delà de la Perse et de l'Arménie. L'Orient latin et la découverte de l'Asie intérieure: Quelques textes inégalement connus aux origines de l'alliance entre Francs et Mongols (1145-1262)*, Turnhout, 2005, p. 174-193, **Th. Tanase**, « Une lettre en latin inédite de l'Ilkhan Abaqa au pape Nicolas III. Croisade ou mission? », in *Les relations diplomatiques entre le monde musulman et l'Occident latin (XIIe-XVIe siècles)*, *Oriente Moderno*, Anno 88 (2), ed. by **D. Aigle** and **P. Buresi**, 2008, p. 333-347, **D. Aigle**, “The Letters of Eljigidei, Hülegü and Abaqa: Mongol overtures or Christian Ventriloquism?”, *Inner Asia*, 2005, vol. 7 (2), pp. 143-162, ինչպես նաև **ճույնի**՝ “From ‘Non-Negotiation’ to an Abortive Alliance. Thoughts on the Diplomatic Exchanges between the Mongols and the Latin West”, in *D. Aigle, The Mongol Empire between Myth and Reality. Studies in Anthropological History*, Leiden-Boston, 2014, pp. 159-198.

⁵ **M. Biran**, “Diplomacy and Chancellery Practices in the Chagatai Khanate: Some Preliminary Remarks”, *Oriente Moderno*, Anno 88 (2), pp. 369-393, ինչպես նաև **M. Vér**, “Chancellery and Diplomatic Practices in Central Asia during the Mongol Period as Shown in Old Uyghur and Middle Mongolian Documents”, *Eurasian Studies (հետալսու՝ ES)*, vol. 17, issue 2, 2020, pp. 182-201.

⁶ **Fr. Fiaschetti**, “Tradition, Innovation and the construction of Qubilai’s diplomatic rhetoric”, *Ming Qing Yanjiu*, XVIII, 2014, pp. 65-96, ինչպես նաև **ճույնի**՝ “Diplomacy in the Age of Mongol Globalization: an Introduction”, *ES*, vol. 17, 2019, pp. 175-181.

որոնց ուսումնասիրությանը զբաղվել են Ա. Ալուշը, Ռ. Ամիտայը, Ջ. Փֆայֆերը⁷: Նրանցից Ռ. Ամիտայի՝ մամլուք-մոնղոլական քաղաքական-ազգային առճակատմանը նվիրված հոդվածները և մենագրությունները՝ երկու պետությունների դիվանագիտական շփումների, դեսպանագնացությունների, պաշտոնական նամակագրության լուսաբանման ամենահաջող փորձն են⁸: Զոչիի ուլուսի խաների և եգիպտոսի սուլթանների դիվանագիտական հարաբերություններին և պաշտոնական նամակագրության արարողակարգի մասին պատկերացում կազմելու համար դեռ օգտակար է Ս. Զաքիրովի ավելի քան կես դար առաջ հրատարակված աշխատանքը⁹: Ոսկե Հորդայի դիվանատան աշխատանքի և պահպանված վավերագրերի ամբողջ կորպուսի վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ծանոթանալ Ա. Գրիգորևի, Ի. Վաշարիի, Մ. Ուսմանովի և Լ. Աբգալովի աշխատություններին¹⁰:

Հատկանշական է, որ մոնղոլական տիրապետության դարաշրջանի հայոց պատմագրական հուշարձանները բավական լավ ուսումնասիրված են: Հայ-մոնղոլական հարաբերությունների և մոնղոլների պատմության ուսումնասիրության ուսումնասիրության համար հայկական սկզբնաղբյուրների ներկայացրած նշանակալի արժեքը գիտակցվել է դեռ ԺԹ դարի կեսերից: Առաջիններից մեկը

⁷ A. Allouche, “Teguder's Ultimatum to Qalawun”, *International Journal of Middle East Studies*, vol. 22, № 4, 1990, pp. 437-446, R. Amitai-Preiss, “An Exchange of Letters in Arabic between Abaya Īlkhān and Sultan Baybars (A.H. 667/A.D. 1268-69)”, *Central Asiatic Journal* (հետալսու՝ CAJ), vol. 38, № 1, 1994, pp. 11-33, J. Pfeiffer, “Aḥmad Tegüder's Second letter to Qalā'ūn (682/1283)”, in *History and Historiography of Post-Mongol Central Asia and the Middle East: Studies in Honour of J. E. Woods*, ed by. J. Pfeiffer and Sh. A. Quinn, Wiesbaden, 2006, pp. 167-202.

⁸ Տե՛ս հատկապես Amitai [-Preiss] R., *Mongols and Mamluks: The Mamluk-Īlkhānid war, 1260-1281*, Cambridge, 1995 ևսլոյնի՝ *The Mongols in the Islamic Lands: Studies in the History of the Ilkhanate* (Variorum Collected Studies: CS 873), London, 2007 ևսլոյնի՝ *Holy war and rapprochement: Studies in the Relations between the Mamluk Sultanate and the Mongol Ilkhanate (1260-1335)*, Turnhout, 2013:

⁹ С. Закиров, *Дипломатические отношения Золотой Орды с Египтом (XIII-XIV вв.)*, «Наука», Москва, 1966.

¹⁰ Առավել կարևորներից Տե՛ս А. П. Григорьев, *Монгольская дипломатика XIII-XV вв. (чингизидские жалованные грамоты)*, Ленинград, 1978, ինչպես նաև ևսլոյնի և В. П. Григорьев, *Коллекция золотоордынских документов XIV века из Венеции: Источниковедческое исследование*, С. Петербург, 2002 Մ. А. Усманов, *Жалованные акты Джучиева улуса XIV-XVI вв.*, Казань, 1979, I. Vásáry, *Az Arany Horda kancelláriája*, Budapest, 1987 (հունգարերեն. մեզ համար անհասանելի է եղել), ինչպես նաև ևսլոյնի՝ “Жалованные грамоты Джучиева Улуса, данные итальянским городам Кафа и Тана”, *Источниковедение истории Улуса Джучи (Золотой Орды) от Калки до Астрахани 1223-1556*, Казань, 2002, стр. 193-206, Л. Ф. Абзалов, *Ханские писцы. Из истории становления и развития канцелярской службы ханов Золотой Орды*, Казань, 2011:

Ֆրանսիացի անվանի հայագետ էդ. Դյուլորիեն էր, ով մոնղոլների պատմությունը դիտարկեց հայկական պատմագրական երկերի հաղորդած տեղեկությունների լույսի ներքո՝ քաղվածական թարգմանություններ կատարելով դրանցից¹¹: Այդուհետ բավական աշխատանք է տարվել մոնղոլական արշավանքների ու նվաճումների, մոնղոլական տիրապետության օրոք հայ-մոնղոլական (ինչպես բուն Հայաստանի իշխանական տների, այնպես էլ Կիլիկյան Հայաստանի) քաղաքական-գիվանագիտական հարաբերությունների, մոնղոլների հարկային քաղաքականության և Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի հետազոտության ուղղությամբ: Առավել կարևորներից հարկ է նշել Ք. Պատկանյանի, Գ. Ալթունեանի, Ա. Գալստյանի, Հ. Մանանդյանի, Լ. Բաբայանի և վերջապես մոնղոլ հայագետ Դ. Բայարսայխանի գրքերը և թեմային նվիրված հոդվածները¹²: Ուսումնասիրության հարուստ ավանդույթ ունենալով թեման, այնուամենայնիվ, դեռ սպառված չէ նաև մեր օրերում: Հայկական և հայագիտության համար նորահայտ կամ քիչ հայտնի օտարալեզու սկզբնաղբյուրների տեղեկությունների համադրական և համեմատական վերլուծությունը կարող է բերել նոր

¹¹ Éd. Dulaurier, « Les Mongols d'après les historiens arméniens », *Journal Asiatique* (հետագայում՝ JA), t. 11, 1858, p. 192-255, 426-473, 481-508 և t. 16, 1860, p. 273-322.

¹² История монголов по армянским источникам, перевод и объяснения К. П. Патканова, Вып. 1: Закрывающий в себе извлечения из трудов Вардана, Стефана Орбелиана и Конетабля Сембата, Вып. 2: Закрывающий в себе извлечения из истории Киракоса Гандзакеци, С.-Петербург, 1873, 1874, G. Altunian, *Die Mongolen und ihre Eroberungen in kaukasischen und kleinasiatischen Ländern im XIII. Jahrhundert*, Berlin, 1911 (Vaduz, 1965) և ճույնի՝ Մոնղոլները եւ նրանց արշավանքները ժԳ դարում (դոկտորական շարագրություն), Վաղարշապատ, 1913 (հայերեն թարգմանություն), Ա. Գալստյան, Մոնղոլական շրջանի հայ գիվանագիտության պատմությունից, Լենինական, 1945, ինչպես նաև *Армянские источники о монголах (извлечения из рукописей XIII-XIV вв.)*, пер. с древнеармянского, предисловье и примечания А. Г. Галстяна, Москва, 1962, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. XI դարից մինչև XV դարի սկիզբը, Երևան, 1952, էջ 178-324 (վերահրատարակությունը՝ Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 189-336), Լ. Բաբայան, Մոնղոլների վարչա-տնտեսական սիստեմը և հարկային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1953, ճույնի՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964, ինչպես նաև ճույնի՝ «Հայաստանը մոնղոլ-թաթարական տիրապետության ժամանակաշրջանում», Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1976, էջ 595-668, D. Bayarsaikhan, *The Mongols and the Armenians (1220-1335)*, Leiden-Boston, 2011: Ամբողջությամբ հայ-մոնղոլական առնչություններին և մոնղոլների վերաբերյալ միջնադարյան հայ պատմագրության և բանահյուսության մեջ պահպանված նյութին է նվիրվել «Բազմավեպ» հայագիտական հանդեսի 2010 թվականի հատորներից մեկը (Բազմավեպ, № 3/4, 2010), ուր հոդվածներով են հանդես եկել Հայաստանի և արտերկրի մի խումբ միջնադարագետներ: «Մոնղոլական շրջանի» հայկական սզբնաղբյուրների հետազոտության պատմության և արդի վիճակի մասին Տեւ Մ. Բայսի հոդվածն այս հատորում (M. Bais, “Armenian Sources on the Mongols”, pp. 366-446):

բացահայտումների՝ հնարավորություն տալով անհրաժեշտության դեպքում լրացումներ և ճշտումներ կատարել արդեն իսկ կատարված աշխատանքներում: Երբեք առանձին հետազոտության նյութ չի եղել նաև հայ-մոնղոլական պաշտոնական նամակագրության և ընծայաբերման թեման, ուստի այս ուսումնասիրությունը նպատակ ունենք լրացնել այդ բացը:

Վերադառնալով Մուհամմադ Հինդուշահ Նախչավանին՝ պետք է նշել, որ նրա վերաբերյալ կենսագրական տեղեկությունները սուղ են: Մատենագրի անունը վկայում է, որ ծնվել է Նախիջևանում: Հայտնի է, նաև որ նա որդին էր Ֆախր ալ-Դին Հինդուշահ իբն Սինջարի, ով նույնպես պատմիչ էր և հայտնի բառարանագիր¹³: Ստանալով հիանալի կրթություն՝ Մուհամմադ Հինդուշահը երիտասարդ տարիքում տեղափոխվել է Թավրիզ և ծառայության անցել մոնղոլական Իլխանության ֆինանսական գերատեսչությունում և զիվանատանը: Արքունականներին՝ մասնավորապես հանրահայտ իլխանյան վեզիր և պատմիչ Ռաշիդ ալ-Դին Ֆաղլալահի որդի Ղիյաս ալ-Դինի բարեհաճությունն ու հովանավորությունը վայելելով՝ նա իլխան Աբու Սաիդի (կառ. 1316-1335 թթ.) հանձնարարություն է ստացել գրելու պետական կառավարման համակարգի վերաբերյալ ձեռնարկ: Աշխատությունը, սակայն, Նախչավանին ավարտին է հասցրել 1360-ական թթ. և նվիրել այդ ժամանակ արդեն տապալված Հուլաղույանների փոխարեն Իրանում ազդեցիկ ուժ դարձած Ջալարյանների (1340-1410 թթ.) սուլթան Շեյխ Ուվայսին (կառ. 1356-1374 թթ.)¹⁴: Չնայած դրան՝ երկը հարուստ տեղեկություններ է պարունակում նաև Իլխանության ժամանակների հասարա-

¹³ Նա արաբերենից պարսկերեն է թարգմանել Իբն ալ-Տիկտակայի (մահ. 1309 թ.) *Kitāb al-Fahṛīn*ը՝ *Taghārib al-salaf* («Ջարմի [կենսա]փորձը») վերնագրի ներքո՝ որոշ չափով լրավակելով այն, ինչպես նաև հեղինակել է *Siḥāh 'aḡam* վերնագրով պարսկերեն-թյուրքերեն բառարան: Տե՛ս *Hinduśāh ibn Saṅgar Nahḡawānī*, *Taghārib al-salaf*, be-tašḥīḥ we-ehitimām 'Abbās Eqbāl, Tehrān, 1965/1966: *Siḡah*-ի հեղինակության մասին Տե՛ս **O. F. Akimushkin**, “On the date of *Al-Siḡah al-‘Ajamiyya*’s composition”, *Manuscripta Orientalia*, vol. 3, № 2 (June 1997), pp. 31-32:

¹⁴ Մուհամմադ Նախչավանին, ինչպես իր հայրը, նույնպես իր ուժերը փորձել է բառարանագրության մեջ: Նրա գրչին է վերագրվում *Siḡah al-Furs* պարսկերենի բացատրական բառարանը (1328 թ.), որը նվիրել է վերոհիշյալ Ղիյաս ալ-Դին Ռաշիդին: Տե՛ս **Muḥammad ibn Hinduśāh Nahḡawānī**, *Siḡah al-Furs*, be-ehitimām 'Abd al-'Alī Ṭa'āṭī, Tehrān, 1962/1963, ինչպես նաև **С. И. Баевский**, *Ранняя персидская лексикография (XI-XV cc.)*, Москва, 1989, с. 39-41, **S. I. Baevskii**, *Early Persian Lexicography. Farhangs of the Eleventh to the Fifteenth Centuries*, tr. by N. Killian, revised and updated by J.R. Perry, Folkestone, 2007, pp. 55-56 (նախորդի թարգմտված թարգմանական հրատարակությունը) **Мухаммад ибн Хиндушах Нахчивани**, *Дастūr al-kātib*, том. 1, часть 1, с. 9 (Предисловие): Ա.Ա.Ալի-Ջադեն ալստեղ շիքրում է հոր և որդու բառարանները՝ հետևելով *Taghārib al-salaf* երկի խմբագիր **Աբբաս էղբալին**: *Hinduśāh ibn Saṅgar Nahḡawānī*, *Taghārib al-salaf*, §. 10 («Հրատարակողի առաջաբան»):


կական-քաղաքական կյանքի իրողությունների մասին: Մեծ հարգանք ու վարկ ձեռք բերելով ժամանակակիցների կողմից կոչվել է Շամս Մունշի (*Šams munšī*, իմա՝ «Գրագիր Շամս»)¹⁵:

Մուհամմադ Նախապանիի *Dastūr al-kātib* երկը մոնղոլական իրանի պետական գերատեսչությունների՝ դիվանների (*dīwān*) այդ թվում պաշտոնական դիվանատան աշխատանքի և նրանց «թողարկած» փաստաթղթերի վերաբերյալ տվյալներ հաղորդող եզակի սկզբնաղբյուրներից մեկն է, որը հրատարակությունից ի վեր խորքային ուսումնասիրության և որևէ լեզվով թարգմանության չի ենթարկվել: Ըստ Հինդուշահի՝ պետական գերատեսչությունները ղեկավարող գերագույն մարմինն այսպես կոչված «Մեծ դիվանն» (*dīwān-i bozorg*) էր կամ «Գերագույն դիվանը» (*dīwān a' lā*), որը ղեկավարում էր արքունի վեզիրը կամ *šāhib dīwān*-ը՝ իր տեղակալի (*nā'ib šāhib dīwān*) հետ միասին: Գործադիր այս մարմնում ընդգրկված պետական պաշտոնյաներն էլ վարում էին արքունի գերատեսչությունները: «Գերագույն դիվան»-ի ազդեցիկ պաշտոնյաներից էր մունշին (*munšī* կամ *munšī tamālik*, թյուրք.՝ *baḥšī*¹⁶) կամ, ինչպես իրանում սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանից էր ժառանգություն մնացել, աուլրաին (*tuğrā'ī*), որի վերատեսչության ներքո էր գտնվում իլխանական արքունի նոտարատունը (*dīwān inšā' wa-tuğrā*): Տուղրա՛ն տիրակալի անունը (ստորագրությունը կամ ինքնագիրը) կրող կնիք էր, որով մունշին կնքում էր նրա անունից կազմված գրությունները: Հարկ է նաև նշել, որ իլխանական նոտարատնից դուրս եկած փաստաթղթերը վավերացվում էին հատուկ նշան կրող կնիքներով, որոնք տամղա (*tamgā*) էին կոչվում և լինում էին տարբեր գույների (ոսկեգույն՝ *altun tamgā*, սև՝ *qarā tamgā*, կապտա-կանաչ՝ *kok tamgā*) կախված վավերացվող փաստաթղթի կարևորությունից և տեսակից¹⁷: Մունշին համակարգում էր արքունի գրագիրների (*bitikčī*) աշխատանքը և վարում պաշտոնական մտից և ելից գրագրությունը՝ այդ թվում պատասխանատու լինելով օտարերկրյա տիրակալների հետ պաշտոնական նամակագրության

¹⁵ Мухаммад ибн Хиндушах Нахчивани, *Дастүр ал-кәтиб*, том. 2, с. 5-7 (Предисловие), D. O. Morgan, “Dastūr al-Kāteb”, in *Encyclopædia Iranica*, vol. VII, Fasc. 2, 1994, pp. 113-114.

¹⁶ J. F. von Hammer-Purgstall, *Geschichte der Goldenen Horde in Kiptschak, das ist der Mongolen in Russland*, Pesth, 1840, S. 219.

¹⁷ G. Leiser, “TAMGHĀ”, in *The Encyclopedia of Islam. New Edition* (հետախու՝ EI²), vol. 10 (T-U), Leiden, 2000, p. 170, G. Doerfer, “ĀL TAMGHĀ”, in *Encyclopædia Iranica* (հետախու՝ EIr), vol. I, Fasc. 7, 1984, pp. 766-768, ինչպես նաև նույնի՝ “ALTŪN TAMGHĀ”, *EIr*, vol. I, Fasc. 9, 1989, pp. 913-914:



«Ղազան խանը (կառ. 1295-1304 թթ.) իլխանական վրանում»։ մանրանկար Ռաշիդ ալ-Դինի Ġāmi‘ al-tawārīḫ-երկի Ֆրանսիայի ազգային գրադարանում պահվող գրչագրում (Հերաթ, Ժե դար)։

St‘u Bibliothèque nationale de France, Supplément Persan 1113, 239բ թերթ

տի բարձր պաշտոնում մեծահմուտ գրագիրների նշանակման դեպքում»¹⁹։ Ըստ նրա՝ սուլթաններին ու արքաներին պետք է մեկը, ում կարելի է վստահել պետական իշխանության գաղտնիքներն ու պետական գործերը²⁰, և այդ մեկն արքունի դիվանապետն է։

ապահովման համար¹⁸։ Ինքը՝ Հինդուշահը, այսպես պատկերավոր է նկարագրում արքունի քարտուղարության (*inšā‘ mamālīk*) պաշտոնն՝ զբաղեցնողի նշանակությունը պետական իշխանության ղեկն զբաղեցնողների համար. «Վերելքը դեպի բարեգարություն և վեհության լեռների կատարները, տիրապետումը կատարելության (*kamāl wa-ikmāl*) հանգրվանների բարձունքներին, վերընթացքն աշխարհակալության (*ḡahānbānī*) աստիճաններով և համբառնումը հերոսության սանդղակներով (*‘urūḡ bar ma‘āriḡ qahramānī*) կարելի են սուկ պետական փարտուրարության դիվանապետ

¹⁸ Իրանում մոնղոլական վարչական ապարատի կառուցվածքի և առանձնապես իլխանական դիվանատան վերաբերյալ տե՛ս Мухаммад ибн Хиндушах Нахчивани, *Дастūr al-kātīb*, том. 2, с. 11-21 (Предисловие), В. Spuler, *Die Mongolen in Iran. Politik, Verwaltung und Kultur der Ilchanzeit 1220-1350*, Akademie Verlag, 1955, S. 289-294, A. Lambton, *Continuity and Change in Medieval Persia: Aspects of Administrative, Economic and Social History, 11th-14th Century*, The Persian Heritage Foundation, 1988, pp. 50-68:

¹⁹ Muḥammad ibn Hindūshāh Naḥḡawānī, *Dastūr al-kātīb fī ta‘yīn al-marātīb*, ց. 2, ք. 117: Հատվածի ամբողջական քարգմանությունը St‘u J. F. von Hammer-Purgstall, *Geschichte*, S. 493-496, ինչպես նաև հմմտ. С. Закиров, *Дипломатические отношения*, с. 104-108:

²⁰ Նույն տեղում:

Ի շարս բազմաթիվ արժեքավոր տեղեկությունների՝ երկար ժամանակ անտեսված է եղել նաև *Dastūr al-kātib* երկի՝ ոչ մուսուլմանների հետ պաշտոնական նամակագրության վերաբերյալ մի շատ ուշագրավ հատված, որում խոսք կա նաև Կրիկիո հայոց արքաների հետ մոնղոլական իշխանությունների նամակագրության մասին²¹: Թարգմանաբար մեջբերենք հատվածը. «Սսի ֆրիստոնյա (*ʿisawīyyān*) թաֆֆուրներին, վրացիներին, նագարեթցիներին (բնագրում՝ *naṣārā*. կրկին նկատի ունի «քրիստոնյաներին») հայերին և ֆրանկներին, հարկավոր է այսպես գրել՝ Սսի թաֆֆուրին, որ այս համայնֆի տիրակալն է (*pādešāh*) ու գլուխը (*bozorg*, այն է՝ «մեծը», «գլխավորը»), մեծագույն վասիլսին (*fāsilyūs aʿzam*), հարգամեծար Ֆայլակուսին (*faylaqūs akram*)՝ Ալեֆսանդրյան ընտանիքի փառֆ (*iftihār-i dudmān-i Iskandar*), ֆրիստոնյաների ապաստան (*malād-i āl-i Masīh*), Սսի թաֆֆուրին, որի մեծությունը բոլոր հարատև լինի»²²: Նախշավանի արձանագրած այս բանաձևի շարունակությունն առաջին իսկ հայացքից հարցեր է հարուցում, քանզի նրանում եղած տիտղոսներն ու պատվանոտները գերազանցապես կրոնական բովանդակության են. «Եպիսկոպոսների եպիսկոպոսին (բնագրում՝ *marhāsyā marhāsyā*)»²³ պատվելի տիրոջը (*tīr mukarram*), ֆրիստոնյաների տիրոջը (*sayyid al-naṣārā*)՝ եպիսկոպոսների ռահվիրա (*qudwat al-asāqifa*), ֆրիստոնեական համայնֆի առաջնորդ (*muqaddam al-ṭāʿifa al-ʿisawīyya*) տեր Դավթին (*tīr Dāwūd*)»:

Ոչ պակաս ուշագրավ է հատվածի երկրորդ մասը. «Վրաց իշխաններին

²¹ *Dastūr al-kātib*-ի այս հատվածի վրա մեզանից առաջ հարևանցի անդրադարձել է Ռ. Շուֆուրովը՝ մատնանշելով բանաձևի ձևակերպման մեջ առկա հակասությունը: Տե՛ս **Р. Шукров, Великие комнины и Восток (1204-1461)**, под ред. **С. П. Карпова**, Санкт-Петербург: Алетея, 2001, с. 49:

²² **Muhammad ibn Hindušāh Nahğawānī**, *Dastūr al-katib* ց. 1.2, ք. 391.

²³ Բառն ասորական ծագում ունի: Ըստ Սիլվեստր դը Սասիի՝ արաբերենի և պարսկերենի փոխառած այս եզրույթը բառացիորեն նշանակում է «սրբազան այր» (այլ կերպ ասած՝ «կրոնավոր», «հոգևորական»), թեև այն ավելի ճիշտ է «եպիսկոպոս» թարգմանել: Տե՛ս **M. Silvestre de Sacy**, «Mémoire sur une correspondance inédite entre Tamerlan et le roi de France Charles VI», *Histoire et mémoires de l'Institut royal de France*, Paris, 1822, p. 476-477: Բառի կիրառության այլ օրինակների համար տե՛ս **Rašīd al-Dīn, Ġāmiʿ al-tawārīh (Tārīh-e Afrang, Pāpān wa-Qayāšera)**, tašhīh-e Moḥammad Rowšān, Tehrān, 2005, ք. 74, **Ḥamd Allāh Mustawfī Qazwīnī**, *Kitāb Nuzhat al-qulūb*, Laydan (Leiden), 1913, ք. 89 (բացատրում է՝ *marhāsyā ke bozorg-i kašīšān ast*, այն՝ «մարհասյան, ով կղերականների մեծն է»), իսկ արաբալեզու պատմագրության մեջ՝ **Izz al-Dīn Ibn Šaddād**, *Tārīh al-Malik al-Ẓāhir*, bi-taḥqīq Aḥmad Ḥuṭayṭ (Die Geschichte des Sultans Baibars von Izz ad-dīn Muḥammad b. ʿAlī b. Ibrāhīm b. Šaddād (st. 684/1285), Wiesbaden, 1983), ք. 169, **Baybars al-Manšūrī**, *Zubdat al-fikra fī tārīh al-ḥiğra*, bi-taḥqīq Dunāld Rīṭšārdz (D.S. Richards), Berlin-Bayrūt, 1998, ք. 71, **al-Yūnīnī**, *Dayl Mirāt al-zamān, al-tabʿa al-ūlā*, ց. 3, Ḥaydārābad, 1960, ք. 112-114:

(*umarā-i kurğ*) [պետք է գրել]՝ հարգարժան իշխան (*amīr mukarram*)՝ Բագրատի զարմի փառք (*iftihār-i āl-i Baqrāt*)²⁴, վրացիների և աբխազների ամիրսպասալար (*sipahdār-i kurğ wa-abhāz*), ֆրիստոնեական զարմի *ռահ-վիրա* (*qudwat āl-i Masīh*) «Իվանեին», [իսկ] ֆահանաներին և վանականներին՝ ֆահանաների ռահվիրա կամ վանականների առաջնորդ «Իվանիսին» (Հովհաննես) կամ ֆրիստոնեական համայնքի առաջնորդ (*muqaddam al-firqa al-masīhiyya*) «Սարգսին» (*Sarkīs*), իսկ [առհասարակ] ֆրիստոնյաներին (*naṣārā*)՝ քրիստոնյաների տեր (*sayyid al-naṣārā*) «Ավագին» (*Awak*)»²⁵:

Նախազավանին, որպես հետգրություն ավելացնում է, որ հայերի և ֆրանկների հետ գրագրությունը նույն սկզբունքով է, իսկ նրանց հետ գրագրության մեջ որպես *du`ā`* կիրառելի էին «մովսիսականներին» (*mūsawīyyān*, իմա՝ հրեաներին) ուղարկվող նամակներում կիրառվողները, որոնք Նախազավանին արձանագրել է «Սսի թաֆֆուրի» հետ նամակագրությանն անդրադառնալուց առաջ: Հարկ է պարզաբանել, որ *du`ā`* (հգն.՝ *ad`iya*) էին կոչվում քրիստոնյա գահակալներին ուղղված նամակներում հասցեատիրոջն ուղղված [բարե]մաղթանքները, վերջինիս բարեկեցության կամ բարօրության համար Ալլահին ուղղված ըղձական աղերսները: *Du`ā`*-ները սովորաբար նախորդում և հաջորդում էին նամակի հասցեատիրոջ անվան հիշատակությանը: Ուստի «հրեաներին» ուղղված նամակագրության բանաձևից դուրս բերենք այդ ըղձական աղերսները, որոնք, փաստորեն, կարելի էր օգտագործել նաև «հայերի» հետ նամակագրության մեջ: Այդպիսի հինգ գրեթե նույնիմաստ արաբերեն արտահայտություններ են հիշվում՝ *hadāhu Allāh* («թող Ալլահն ուղղորդի նրան»), *aršadahu Allāh* («թող Ալլահը նրան ճիշտ ուղի ցույց տա»), *adallahu Allāh ilā al-dīn al-qawīm* («թող Ալլահը նրան դարձնի դեպի [միակ] ճշմարիտ կրոնը»), *saddada Allāh tarīqahu* («թող Ալլահը նրան ճիշտ ճանապարհի վրա դնի»), *aršadahu ilā al-ṣirāṭ al-mustaqīm* («թող Ալլահն ուղղորդի նրան դեպի [միակ] ճշմարիտ ուղին»)»²⁶:

Շատ հետաքրքիր է բանաձևում հայերեն «տեր» բառի տառադարձված գործածումը: Այստեղից ակներևաբար հետևում է, որ բանաձևի առաջին մասը նախատեսված է եղել հայոց արքաներին, իսկ երկրորդ մասը՝ հայոց կաթողիկոսներին գրելու համար: «Դավիթ» անունն այստեղ ամենայն հավանականությամբ կամայականորեն է հիշատակված՝ պարզապես որպես օրինակ, քանզի ոչ

²⁴ Նկատի է առնված Բագրատունիների (վրաց.՝ Բագրատիոնիներ) հարստությունը:

²⁵ Muḥammad ibn Hindušāh Nahḡawānī, *Dastūr al-katib*, ց. 1.2, ց. 391-392.

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 391:

Իլխանության շրջանում և ոչ էլ Զալարյանների օրոք հայոց հայրապետական աթոռին «Դավիթ» անունով կաթողիկոս չի նստել²⁷: Յավոք, պահպանված չեն նաև Իլխանական իշխանություններից հայոց կաթողիկոսներին հասցեագրված նամակներ, որ կհավաստեին այս բանաձևի իսկությունը: Մեզ են հասել կամ գոնե ցայսօր հայտնի են լոկ Աբու Սաիդ իլխանի օրոք հրապարակված երկու հրովարտականեր (յառլըղներ կամ յառլիկներ)²⁸ տրված Դարաշամբի Ս. Ստեփանոս նախավկայի վանքի վանահայր Վարդանին (կրկին անվանված է մարհաւ[յ]ա)՝ նրա վակուֆային-հողատիրական իրավունքները սահմանելու համար²⁸: Հետևաբար այդ երկու փաստաթղթերը ոչ մի կերպ չեն կարող օգտակար լինել Մուհամմադ Հինգուշահի պահպանած դիմումաձևի ուսումնասիրության հարցում:

Հատվածի վերջնամասում, ինչպես կարելի է տեսնել, ներկայացված են վրաց ազնվականության հետ գրագրության մեջ օգտագործված որոշ բանաձևեր: Ընդ որում, Մուհամմադ Հինգուշահի մատնանշած անուններից (Իվանե, Ավագ) առավել քան ակնհայտ է, որ խոսքը Վրաց թագավորության ևսլանապետ Զաքարյանների (վրաց.՝ Մխարգրձեխների) տոհմի հետ մոնղոլներ-



Քաղվածքներ Ստամբուլի Քյոփրյուլու Ֆազլի Ահմեդ գրադարանի՝ Dastūr al-kātib-ի գրազգրի (թիվ 1241 ձեռագիր) 147թ.-148ա էջերից, որտեղ ներկայացվում են «Սսի թաֆնուրի» և մյուս Բիստունյանների հետ նամակագրության վերոբերյալ բանաձևերը

²⁷ Հատկանշական է, որ 1346-մոտ 1368 թվականներին Դավիթ Բ անունով կաթողիկոս է նստել Ախթամարում:

²⁸ Հ. Փափազյան, «Երկու նորահայտ իլխանական յառլիղներ», ԲՄ, № 6, 1962, էջ 379-401: Այս երկու իլխանական յառլիղներից հետո՝ մեզ հասած պարսկերեն հնագույն վավերագիրը Կարա-Կոյունլու սուլթան Զհանշահի տված մի հրովարտակ է թվագրված 1449-ով: Տես նույնի՝ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտականեր, պրակ Ա (Ժե-ԺՂ դդ.), Երևան, 1956, էջ 43:

րի դիվանագիտական շփումների արդյունքում դեռ մինչև ժԳ դարի կեսերը ձևավորված նամակագրական բանաձևերի մասին է, որոնք, փաստորեն, հետագայում փոխառել է և շարունակել է օգտագործել Իլխանության պետական դիվանատունը:

Ինչևիցե, եթե վերադառնանք բանաձևի սկզբնամասին, ապա մյուս ուշագրավ հանգամանքը, անշուշտ, հենց հայոց արքաներին վերագրված տիտղոսներն ու պատվանուններն են՝ մասնավորապես *fāsilyūs a'zām*-ը, *Faylaqūs akram*-ը և *iftihār-i dudmān-i Iskandar*-ը: Դրանցից առաջինը շատ ավելի հարիր էր Բյուզանդական կայսրերին վերագրվելու համար, քան թե Կիլիկիո հայոց միապետերին: Իսկ մյուս երկու պատվանունների տակ նկատի են առնված համապատասխանաբար Մակեդոնիայի արքա Ֆիլիպ II-ն (կառ. մ.թ.ա 359–336 թթ.) և նրա որդի Ալեքսանդր Մակեդոնացին (կառ. մ.թ.ա. 336–323 թթ.), որոնց ժառանգներ հայոց արքաներն իրենց երբեմն չեն համարել: Դրան հակառակ՝ մամլուքյան դիվանատան փաստաթղթերում Բյուզանդական կայսրության միապետերը համարվում էին Ալեքսանդր Մեծի հետնորդներ: Օրինակ, ալ-Կալկաշանդին («Ռումի արքաների») իր տոհմաբանական ցանկում ներառել է նաև Ֆիլիպին (*Fīlibūs*) և նրա որդի Ալեքսանդրին (*al-Iskandar*)²⁹: Մամլուքյան սուլթանության և Բյուզանդական կայսրության դիվանագիտական նամակագրության վերաբերյալ իր ուսումնասիրության մեջ վերջերս Դմիտրի Կորոբեյնիկովը, քննության առնելով պարսիկ մատենագրի պահպանած բանաձևը, եզրակացրել է, որ հայոց և ֆրանկ թագավորների հետ նամակագրության դիմումը (*rasm*) կազմելիս, իլխանական դիվանատանն ըստ էության հիմք է ընդունվել բյուզանդական կայսրերի հետ նամակագրության բանաձևը, որը, սակայն, *Dastūr al-kātib*-ում ավանդված չէ³⁰: Դ. Կորոբեյնիկովի այս տեսակետը, իհարկե, ընդունելի է մեզ համար: Հայոց արքային բյուզանդական տիտղոսներով կոչելը զուտ մեխանիկական վերագրում համարել չի կարելի. չէ՞ որ տարածաշրջանի պատմական հիշողության մեջ դեռ մարմրում էր այն պատկերացումը, որ հայոց թագավորությունը ծնունդ էր առել Սրբազան Հռոմեական կայսրության ինքնակալի և Բյուզանդիայի կայսեր ուղարկած թագերով: Զուր չէ, որ Լևոն Մեծագործ արքան (կառ. 1198-1216 թթ.) իր ուղարկած պաշտոնական նամակներում և շնորհած արտոնագրերում իրեն հաճախ «Հռոմեական կայսրության

²⁹ Al-Qalqašandī, *Ṣubḥ al-a'šā fī šinā'at al-inšā'*, ց. 5, al-Qāhira, 1915, ք. 380, ինչպես նաև D. A. Korobeinikov, “Diplomatic Correspondence between Byzantium and the Mamluk Sultanate in the Fourteenth Century”, *Al-Masāq*, vol. 16, 2004, p. 64.

³⁰ Նույն տեղում, pp. 64-65:

փառք»³¹ էր կոչում: Նույնքան պատահական չէ, որ մամլուքյան մատենագիր և կահիրյան դիվանատան դպիր ալ-Ումարին (մահ. 1349 թ.) նույնպես հայոց թագավորության մասին իր պատմական ակնարկը սկսում է ժամանակին տարածված այն պատկերացման բացատրությամբ, թե իբր «թաֆֆուրի դինաստիան» սերում էր «կոստանդինյան տնից»՝ նույնն է, թե Հռոմի կայսր Կոստանդիանոս I Մեծից (կառ. 306-337 թթ.) և նրա սերունդներից³²: Այդ վերհուշն իր յուրատեսակ վերարժեորումն է գտել Կիլիկիո հայոց թագավորության նկատմամբ հարակից մուսուլմանական կազմավորումների ընկալումներում՝ արտացոլվելով նրանց բարձրագույն քաղաքական իշխանությունների և հայոց արքաների դիվանագիտական նամակագրության արարողակարգում:

Բ. Դիվանագիտական նամակագրության լեզուն, բանագնացները, թարգմանիչները.

Կարևոր է պարզաբանել նաև հայ-մոնղոլական դիվանագիտական նամակագրության լեզվի հարցը: Ցավոք, սկզբնաղբյուրային վկայությունների և վավերագրերի բացակայությունը թույլ չի տալիս հիմնավոր տեսակետ առաջարկել: Այնուամենայնիվ, որոշ փաստերի հիմքով կարելի է ենթադրություններ անել: Նախ արձանագրենք, որ ի տարբերություն Մամլուքյան սուլթանության՝ միջնադարյան սկզբնաղբյուրներում շատ սակավաթիվ են մոնղոլական ուրդու («ճամբար», «ռազմակայան», «արքունիք») ուղարկված հայկական դիվանագիտական ներկայացուցչությունների մասին վկայությունները: Սրա պատճառը հավանաբար այն է, որ հայոց արքաները՝ համաձայն մոնղոլական աշխարհակալական գաղափարաբանության, որպես մոնղոլական պետության վասալներ՝ պարտավորություն են ունեցել անհրաժեշտության դեպքում իրենք անձամբ ներկայանալու կամ ծայրահեղ դեպքերում իրենց փոխարեն բարձաստիճան մեկ այլ պաշտոնատար անձ ուղարկելու իշխանություն:

1220-1240-ական թվականներին Կովկասյան տարածաշրջանը և Փոքր Ասիան սրբնթաց արշավանքներով գրավելով՝ մոնղոլական բանակներն արդեն նույն 1240-ական թվականներին իրենց են ենթարկում Ռուսիայի իշխանություններն ու ապա շարժվում դեպի Հունգարիա և Լեհաստան՝ ջախջախելով նաև եվրոպական բանակները: Մոնղոլական ներխուժման վերահաս վտանգը վախի

³¹ V. Langlois, *Le trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupénides*, Venise, 1863, p. 105, 112, 117-118, 130: Հմմտ. D. Korobeinikov, "Diplomatic Correspondence", p. 74, n. 122:

³² Al-'Umārī, *Al-Ta'riḥ bi-l-muṣṣalāḥ al-šarīf*, bi-taḥqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Bayrūt, 1988, ք. 80.

և տագնապի մթնոլորտ է ստեղծում եվրոպական մայրաքաղաքներում՝ օրահարց դարձնելով նոր նվաճողների հետ անհապաղ երկխոսությունը: Առաջին քայլերից մեկը կատարում են կաթոլիկ պապերը՝ դեսպանագնացություններ ու նամակներ ուղարկելով նրանց զորապետերին և քաղաքական առաջնորդներին: Միայն թե ինչպե՞ս և ի՞նչ լեզվով խոսել նոր զավթիչների հետ: Դ. Էգլն իրավացիորեն եվրոպացի ինքնակալների և մոնղոլ խանների մեզ հասած նամակագրությունը բաժանում է երկու մասի: 1247-1254 թթ. ընդգրկող ժամանակահատվածից մեզ են հասել մոնղոլ Մեծ խանների (Գույուկ, Մոնգկե) և լատին հոգևոր և աշխարհիկ միապետների (Իննոկենտիոս IV պապ, Ֆրանսիայի արքա Լուի IX) փոխանակած նամակներ, որոնց կենտրոնական թեման մոնղոլական գերիշխանությունն անվերապահորեն ճանաչելու պահանջն էր: Երկրորդ խմբի վավերագրերն արդեն Իրանի իլխանների հետ փոխանակած գրություններն են, որոնց համար առանցքային է արդեն Մամլուքյան սուլթանության դեմ ռազմական դաշինք ստեղծելու և Ասորիքն ու Սուրբ Երկիրը մուսուլմանների ձեռքից համատեղ ուժերով ազատագրելու թեման³³:

Արևելյան քրիստոնյաների, իսկ հետո նաև եվրոպացիների հետ շփման առաջին իսկ փորձերից մոնղոլները նույնպես բախվել են լեզվական խոչընդոտի խնդրին: Մի բան պարզ էր, իրենց գրաված բազմազգ և բազմալեզու անծայրածիր տարածքներում իշխելն անկարելի էր լինելու առանց գրավված ժողովուրդների լեզվական և մշակութային առանձնահատկությունները հաշվի առնելու: Մոնղոլական արշավանքների արդյունքում, ճիշտ է, աննկարագրելիորեն վերաձևվում է գրեթե ողջ եվրասիայի քաղաքական քարտեզը, բայց էթնոլեզվական առումով աշխարհամասի նկարագիրը գլխիվայր չի շրջվում, թեև ավելի խայտաբղետ է դառնում: Այսպես, մոնղոլներենն առանձնապես ճանաչված լեզու չէր գրավյալ ժողովուրդների շրջանում, ուստի անիրատեսական էր տեղական լեզուներն ու մշակույթը մամլելու գնով հասնել մոնղոլներենի մասսայականացմանը: Ուստի Մոնղոլական Մեծ տերությունում, իսկ հետո նաև առանձին ուլուսներում, մոնղոլներենի (ուլգուրական գրով) պաշտոնական կարգավիճակին զուգահեռ՝ մոնղոլ իշխողները մշտապես ակտիվորեն օգտվում էին նաև տեղացի ոչ-մոնղոլ (այդ թվում հայ) թարգմանիչների (մոնղոլ.՝ *kālāmāčī* կամ *kalemtūrčī*, թյուրք.՝ *tīlmač*) և դեսպանների (մոնղոլ.՝ *ilčī*, թյուրք.՝ *yalaawāč*) ծառայություններից³⁴՝ այդու միջազգային, միջմշակութային և միջքաղաքակր-

³³ D. Aigle, “The Letters of Eljigidei, Hülegü and Abaqa”, p. 143-144.

³⁴ D. Sinor, “Interpreters in Medieval Inner Asia”, *Asian and African Studies*, vol. 16, № 3, 1982, pp. 311-316 P. Jackson, *The Mongols and the West, 1221-1410*, London-New York, 2005 (2nd edition 2015), pp. 173-174: Դեսպաններն ու սուրհանդակները մոնղոլախառակ տարածք-

Թական շփման ու առնչությունների նոր դարաշրջան բացելով³⁵: Իսկ օրինակ, Ջոշիի ուլուսի (Ոսկե Հորդայի) դեպքում՝ գերակշռող թյուրքալեզու բնակչու-

ներով համփոփում էին մոնղոլական իշխանություններից ստացած հատուկ «արտոնագրերով», որփայլաէին կոչվում (տե՛ս ներքևում): Լայնարձակ տարածքներով բանագնացների անվտանգ ու անխոչընդոտ երթևեկն ապահովելու համար մոնղոլական Մեծ տերությունում Ուգեդեյ խանից սկսած, իսկ հետո նաև մյուս մոնղոլական ուլուսներում գործում էր կանոնավոր փոստային համակարգ, որը յամ (*yām*) էր կոչվում: Այն իրենից ներկայացնում էր բազմաթիվ ուղերթերով փոխադրված փոստային կայանների ցանց: Ընդ որում, մոնղոլ սուրհանդակներն արտոնություն ունեին գիշերակացի տեղ, պարեն, անասնակեր, փոխադրամիջոցներ (փոստաձիթ՝ *ulāg*) և կամ անհրաժեշտ այլ պարագաներ պահանջել և անհատույց ստանալ այն վայրերի բնակչությունից, որտեղով նամփոփում էին: Շատ հաճախ հարյուրավոր ուղեկիցների շֆագնդերով և պաննորդներով շրջող բանագնացները վերազանցում էին իրենց արտոնությունները՝ կեղեքելով ու հարստահարելով տեղացի բնակչությանը: Ըստ Ռաշիդ ալ-Դինի՝ իրավիճակն այնքան է բարդացել, որ Դազան խանի օրոք յամ-ի բարեփոխմանն ու իլչիների գործունեությանը վերաբերող նոր հրովարտակ է հրապարակվել, որի համաձայն զգալիորեն կրճատվել է վերջիններիս թիվը, ինչպես նաև սկսել են նրանց արժույթի գանձարանից օրապահիկ վճարել: Տե՛ս **Rašīd al-Dīn, Gāmi' al-Tawārīh**, ց. 1, be-kūšē-e Bahmān Karīmī, Eqbāl, Tehrān, 1960, ց. 1045-1050 և **Рашид-ад-Дин, Сборник летописей**, том III, пер. **А. К. Арендса**, под ред. **А. А. Ромаскевича**, Москва-Ленинград, 1946, с. 263-268: Տե՛ս նաև **Հ. Մանանդյան**, *Քննական տեսություն* (հ. Գ), էջ 291-293, **Լ. Բաբայան**, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը*, էջ 488-492, *ինչպես նաև նույնի*՝ «Հայաստանը մոնղոլ-թաթարական տիրապետության ժամանակաշրջանում», էջ 654, **D. Bayarsaikhan, The Mongols and the Armenians**, pp. 115-116: Մոնղոլական փոստային համակարգի մասին ավելի մանրամասն տե՛ս **A. Silverstein**, “The Mongol Yām and its legacy”, in *Postal Systems in the Pre-Modern Islamic World*, Cambridge, 2007, pp. 141-164: Գրիգոր Ակներցու «Պատմութիւն ազգիւն նետողաց» երկում իլչիների երթևեկի, գիշերակացի և պարենավորման պարհակը «տզղու» (որոշ գրչագրերում՝ «տղղու» կամ «տրղու») եզրով է բնորոշված: Ըստ Ֆ.Վ. Կլիվզի՝ այն հավանաբար թյուրքական ծագում ունի, որի մոնղոլերեն համարժեքը *tusqu*-ն է, որ «բաժակ» կամ «սկան» նշանակությունն ունի: Տե՛ս **F. W. Cleaves**, “The Mongolian Names and Terms in the History of the Nation of the Archers by Grigor of Akanc”, *HJAS*, vol. 12, № 3/4, 1949, p. 442, ինչպես նաև վերջինիս հղած գրականությունը և հմմտ. **Լ. Բաբայան**, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը*, էջ 486-493:

³⁵ Երևույթի փայլուն օրինակ է ԺԴ դարի կեսերին Եմենի Ռասուլյան հարստության տիրակալ ալ-Մալիխ ալ-Աֆղալ Դիրդամ ալ-Դին ալ-Աբբասի (1363-1377 թթ.) պատվերով (կամ գուցե հենց նրա ձեռով) գրված վեցալեզու (արաբերեն, պարսկերեն, բյուրբերեն, մոնղոլերեն, հունարեն, հայերեն) մի բառարան: Բառարանի հրատարակության նախաբանում մերձավորարևելյան տարածաշրջանում մոնղոլական գործոնի հարուցած էթնոլեզվական փոփոխությունների մասին երկու հետաքրքիր ակնարկ են ներկայացրել **Պ. Գոլդենն** ու **Թ. Օլսենը**: **P. B. Golden**, “The World of the Rasulid Hexaglot” & **Th. T. Allsen**, “The Rasulid Hexaglot in its Eurasian Cultural Context”, in *The King's dictionary: The Rasūlid Hexaglot: Fourteenth century vocabularies in Arabic, Persian, Turkic, Greek, Armenian and Mongol*, tr. by **T. Halasi-Kun, P. B. Golden, L. Ligeti and Ed. Schütz**, with introductory essays by **P. B. Golden** and **Th. Allsen**, notes and commentary by **P. B. Golden**, Leiden, 2000, pp. 1-24 & 25 49.

թյան պարագայում, մոնղոլերենն այդպես գերիշխող դիրք չի ստացել և շատ արագ իր տեղը զիջել է թյուրքերենին³⁶:

Սկզբնական շրջանում, իհարկե, լատին-մոնղոլական շփումը շատ բարդ էր ստացվում: Մի միջադեպ շատ ցայտուն է դրսևորում այդ բարդությունը: Իննուկենտիոս IV-ի (1243-1254 թթ.) նվիրակ Ասցելինը և նրա ուղեկից Սիմոն դը Սենտ Քվենտինը, որոնք Արևելք էին ուղարկվել՝ տեսակցելու մոնղոլ զորապետ Բաչու-նոյինին, 1247 թ. ամռանը վերջինիս գտնում են Հայաստանի Սիսիան բնակավայրի մերձակայքում գտնվող զորակայանում և փորձում փոխանցել պապի ուղարկած նամակները: Վինսենտ դե Բովեի *Speculum Historiale* աշխատության մեջ մեզ է հասել Սիմոն դը Սենտ Քվենտինի՝ դիվանագիտական վերոհիշյալ առաքելության մասին գրած հաշվետվական գեկույցը՝ *Historia Tartarorum* («Թաթարների պատմություն») խորագրով, որի շնորհիվ էլ հայտնի են Բաչուի հետ բանակցությունների մանրամասները: Վինսենտ դը Բովեի գրքի գրչագրերից Սիմոն դը Քվենտինին վերագրվող հատվածների քննական հրատարակությունը կազմել է Ժ. Ռիշարը³⁷: Ինչ վերաբերում է հիշյալ միջադեպին, մասնավորապես պատմվում է, որ Ասցելինն ու նրան ուղեկցող վանականներն ու երեք թարգմանիչները Բաչուի և այլ թյուրք և հույն թարգմանիչների (բնագրում *et a Grecis interpretibus*) հետ մեկտեղ թարգմանում են պապի նամակները նախ պարսկերեն, ապա փոխադրում մոնղոլերենի և հետո միայն ներկայացնում Բաչուին³⁸: Այնուհետև իր նամակն ու Գույուկ խանի հրովարտակը պապին հասցնելու համար Բաչուն Ասցելինին և նրա ճանփորդակիցներին ուղեկից է կարգում իր մոտ ծառայության մեջ գտնվող երկու թարգմանիչների՝ Այբեգ (*Aybeg*) և Սարգիս (*Sargis*) անուններով, որոնցից երկրորդն ըստ Դ. Սինորի՝ շատ հավանական է, որ հայ լիներ³⁹, չնայած կա նաև նրա նես-

³⁶ И. Васари, “Многоязычие и культурные взаимодействия в Золотой Орде”, *Золотоордынское Обозрение*, 2017. т. 5, № 1, с. 56-63 և հատկապես Л. Ф. Абзалов, *Ханские писцы*, с. 79-129.

³⁷ Simon de Saint-Quentin, *Histoire des Tartares*, ed. J. Richard, Paris, 1965: Պապական նվիրակների դեսպանագնացության մասին Տե՛ս նաև G.G. Guzman, “Simon of Saint-Quentin and the Dominican Mission to the Mongol Baiju: A Reappraisal”, *Speculum*, vol. 46, № 2, 1971, pp. 232-249, ինչպես նաև նույնի՝ “European Clerical Envoys to the Mongols: Reports of Western merchants in Eastern Europe and Central Asia, 1231-1255”, *Journal of Medieval History*, vol. 22, № 1, 1996, pp. 53-67:

³⁸ Simon de Saint-Quentin, *Histoire des Tartares*, p. 106, 115.

³⁹ D. Sinor, “Interpreters”, pp. 313-314: Հիշյալ դեսպանների՝ Իննուկենտիոս IV-ի մոտ ընդունելության մասին հաղորդում է Մատթեոս Փարիզցի (մահ. 1259 թ.) ժամանակագիրը: Տե՛ս Matthew Paris’s *English History: From the Year 1235 to 1273*, vol. 2, trans. from the Latin by G.A. Giles, London, 1853, p. 280: Ըստ նրա՝ պապը նրանց հետ խոսել է թարգմանիչների միջոցով, ինչը նշանակում է, որ նրանք լատիներենին չեն տիրապետել: Դ. Սինորը, հետևաբար, եզրակացնում է, որ «Այբեգն ու Սարգիսը» հավանաբար հենց այն թարգմանիչներն էին,

տորական լինելու մասին տեսակետ⁴⁰: Ֆրանսիայի արքա Լուի Թ-ի բանագնաց Գիյոմ դը Ռուբրուքն իր ուղեգրություններում գրում է, որ մոնղոլ զորապետ Բաթուխանի (հետագայում՝ Ջուչի Ուլուսի կամ Ոսկե Հորդայի հիմնադիր) որդի Սարթախի արքունիքում նույնպես թյուրքերեն և արաբերեն իմացող հայ վանականների է հանդիպել⁴¹:

Մոնղոլական Մեծ տերության մայրաքաղաք Կարակորում հասած պապական մեկ այլ նվիրակ Պլանո Կարպինիի (մահ. 1252 թ.) դեսպանագնացության շնորհիվ Վատիկանի գաղտնի արխիվում (այժմ՝ Վատիկանի առաքելական արխիվ) մեզ է հասել Իննոկենտիոս պապին ողջված Գույուկ խանի նամակի պարսկերեն բնօրինակը և նույն նամակի լատիներեն թարգմանությունը՝ կատարված, սակայն, ոչ թե պարսկերեն բնագրից, այլ մոնղոլերեն (ուլգուրերեն) նախօրինակից, որը չի պահպանվել⁴²: Ինքը՝ Պլանո Կարպինին, որն իր գիվանագիտական առաքելության ընթացքը ներկայացրել է իր ուղեգրական գրքում՝ *Ystoria Mongalorum quos nos Tartaros appellamus* («Պատմություն մոնղոլների, որոնց մենք թաթար ենք կոչում») կամ *Liber Tartarorum* («Գիրք թաթարաց») վերնագրերով, այսպես է նկարագրում նամակի գրության հանգամանքները. «Եվ նա (իմա՝ Գույուկը) այդժամ հարցրեց մեզ, թե արդյոք պապն իր շրջապատում ունի մեկին, որը հասկանում է ռուսների, սարակենոսների (պարսկերեն) և կամ մոնղոլների լեզուն: Մենք պատասխանեցինք, որ չունենք մեկին, ով հասկանում է ռուսերեն, սարակենոսերեն և մոնղոլերեն, չնայած որ մեր երկրում կան սարակենոսներ, բայց նրանք պապից հեռու են բնակվում: Մենք ասացինք, որ ամենողջամիտը կլինի, եթե նրանք իրենց մտքերը մոնղոլերեն շարադրեն և ապա թարգմանեն մեզ համար, իսկ մենք այն ուշադրությամբ մեր լեզվին կփոխադրենք»⁴³: Պլանո Կարպինին շարունակում է, որ անվտանգության նկատառումներով իրենց է հանձնվել նաև նամակի պարսկերեն տարբերակը՝ տարընկալումներից խուսափելու համար⁴⁴:

Հայ-մոնղոլական հարաբերություններում օգտագործված բանագնացների

որոնք պապի նամակը պարսկերեն էին թարգմանել: Տե՛ս **D. Sinor**, “Interpreters”, p. 314, ինչպես նաև **P. Jackson**, *The Mongols and the West*, p. 89:

⁴⁰ **P. Pelliot**, « Les Mongols et la papauté », ROC, t. 24, 1924, p. 327.

⁴¹ *The Mission of Friar William of Rubruck His Journey to the Court of the Great Khan Möngke, 1253–1255*, trans. by **P. Jackson**, Introduction, notes and appendices by **P. Jackson** with **D. Morgan**, London, 1990, p. 118, 171: Նույն Ռուբրուքը Սարգիս անունով մեկ այլ հայ վանականի է հանդիպել նաև Կարակորումում՝ Մանգու խանի արքունիքում, ով նրան ասել է, թե իբր պատրաստվում է մկրտել խանին: Նույն տեղում, էջ 187:

⁴² **P. Pelliot**, « Les Mongols et la papauté », ROC, t. 23, p. 17-23.

⁴³ *The Texts and Versions of John de Plano Carpini and William de Rubruquis*, as printed for the first time by Hakluyt in 1598, together with some shorter pieces, ed. **C. R. Beazley**, London, 1903, p. 143.

⁴⁴ Նույն տեղում, p. 144:

վերաբերյալ ուշագրավ ալ սկզբնաղբյուրային փաստեր էլ կան: Օրինակ, Հեթումի 1254 թ. ուղևորության կազմակերպիչների և շքախմբի կազմում Կիրակոս Գանձակեցին և Սմբատը նշում են հայազգի Բարսեղ անունով մի քահանայի, որ «դեսպանն էր Բաթուին»⁴⁵ և «բազում անգամ նամապարհ արարեալ էր ընդ նույն պողոտայ»⁴⁶: Այս Բարսեղ վանականը գուցե մեհկն էր այն հայ հոգևորականներից, որն ըստ Գիյոմ դը Ռուբրուքի՝ ծառայում էին Սարթախին: Բար Հերետսի ասորերեն ժամանակագրության մեջ վկայություն կա հավանաբար նույն Բարսեղ վանականի մասին, ով հայոց արքայի դեսպաններ թաթարների մոտ⁴⁷: Իսկ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Կարակորումից հետդարձի ճանապարհին Հեթում արքան, ինչպես որ Կարակորում ուղևորվելիս, առժամանակ կանգ է առել Արագածոտնի Վարդենիս գյուղում՝ իջևանելով Քուրդ Վաչուտյան անունով հայ իշխանի տանը՝ սպասելով Բարսեղ քահանային, որին վերստին ուղարկել էր Բաթու խանի մոտ՝ «զի ցուցցէ նմա զգիրս և զհրաման Մանգու ղանին, զի նա ըստ նմին օրինակի՝ գրեսցէ հրամանս»⁴⁸: Յավոք, պատմիչը, ի տարբերություն Պլանո Կարպինիի, հարկ չի համարում նշել, թե որ լեզվով էին տրվել Բաթուի և Մանգուի գրություններն ու վերջինիս հրովարտակը:

Աղբյուրներում տեղեկություններ կան նաև նահանգային մոնղոլ պաշտոնյաներին կամ առանձին զորապետերին ծառայող հայ զրազիրների ու դպիրների մասին: Զորօրինակ, Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ երբ ինքը մի խումբ ալ վանականների հետ գերի է ընկել մոնղոլ զորապետ Մուլար նոյինին, վերջինս ցանկացել է, որ ինքը որպես զրազիր ծառայի նրան. «Ապա առին և զիս յընկերաց իմոց զկնի իւրեանց ի պէտս դպրութեան՝ գրել թուղթ և ընթեռնուլ»⁴⁹:

⁴⁵ «Եւ եպիսկոպոսն տէր Ստեփանոս եկն, և Մխիթար վարդապետն, որ լինէր ի Սկևռայն, գնացեալ անդ ի կողմանցս Արևելից, և Բարսեղ քահանայ, որ դեսպանն էր Բաթուին, ընդ նմա իսկ եկեալ էր և Թորոս քահանայ կուսակրօն, և Կարապետն, որ դրան երէց էր արքային, հեզ բարոմ և գիտնական, ալլ և իշխանմ յովով»: Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1961, էջ 366: Հեթումի ուղևորության մասին Կիրակոսի հաղորդման բնագրումը Տե՛ս J. A. Boyle, “The Journey of Het’um I, King of Little Armenia, to the Court of the Great Khan Mongke”, CAJ, vol. 9, № 3, 1964, pp. 175-189:

⁴⁶ **Սմբատայ Սպարապետի Տարեգիրք**, աշխատասիրությամբ Հ. Սերովբէ Ազըրեանի, Վենետիկ, 1956, էջ 230:

⁴⁷ *The Chronography of Gregory Abû'l-Faraj (Bar Hebraeus), the Son of Aaron, the Hebrew Physician, the first part of his Political History of the World*, vol. I, trans. Ernest A. Wallis Budge, London, 1932 (Piscataway, 2003), p. 447: Երկի արաբերեն խմբագրության մեջ Բարսեղի անունն արձանագրված չէ: **Ibn al-İbrî, Tārîḥ muḥtaṣar al-duwal**, al-ṭab’a al-tāniya, bi-taḥqîq Antûn Şālihîhânî al-Yasû’î, Bayrût, 1994, s. 499 (Բարսեղ վանականի փոխարեն՝ «նրա իշխաններից մեկը»):

⁴⁸ **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, էջ 370:

⁴⁹ Նույն տեղում, էջ 249:

Մոնղոլ զորապետը հրաժարվել է Կիրակոսին ազատ արձակել նաև փրկագնի դիմաց՝ պատճառաբանելով. «Սա ի պետք է մեզ թուղթ գրելոյ և ընթերցման, քէպետ բազում գինս տայք, ո՛չ տամք զսա»⁵⁰: Կիրակոսը, ով հավանաբար պարսկերեն է իմացել, այս «ծառայություն» ընթացքում անգամ ինչ-որ չափով տիրապետել է նաև մոնղոլերենին⁵¹: Գրիգոր Ակներցին իր «Պատմութիւն ազգին նետողաց» երկում հաղորդում է, որ Բաշու նոյինը վրաց արքա Գեորգի Դ Լաշայի որդի Դավթին բանտարկությունից ազատելու գիվանագիտական առաքելությունը վստահել էր Վահրամ Գագեցի հայազգի իշխանին⁵²: Հակոբիկների մաֆրիան Բար Հեբրեոսի ասորերեն ժամանակագրության մեջ՝ 1265 թվականի անցքերի շարադրանքում, տեղեկություն կա Բաղդադի մոնղոլ վերատեսուչ (շիհնա՝ *šihna*) Կարա-Բուղայի «Իսահակ հայ» անունով մի գպիրի մասին, ով ներքաշված է եղել Իրաքի կառավարիչ Ալա ալ-Դին Ջուվայնիի⁵³ դեմ կազմակերպված դավադրության մեջ⁵⁴: Ժամանակագրության արաբերեն խմբագրության մեջ նույն դրվագում Իսահակը Կարա-Բուղայի «տեղակալ» (*Qarā-Būḡā wa-nā'ibuhu Ishāq al-Armanī*, ընդգծումը մերն է – Գ. Դ.) է անվանված⁵⁵:

Աղբյուրներում հիշատակություններ կան նաև հենց իլխանական պահակագնդի հայազգի ծառայողների մասին: Մասնավորապես Գրիգոր Ակներցին վկայում է. «... զի զգեղեցիկ եւ զերիտասարդ որդիս մեծ իշխանացս Հայոց եւ Վրաց ընտրեաց եւ կացոյց դոնապանս իւր, եւ անուանեաց զնոսայ քէսիկ-

⁵⁰ Նույն տեղում, էջ 251:

⁵¹ Նույն տեղում, էջ ԺԳ-ԺԹ (Առաջաբան) և 273-275:

⁵² **Գրիգոր Ակներցի**, *Պատմութիւն թաթարաց*, Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1974, էջ 33-34: Բարսեղի, Կիրակոսի և Վահրամ Գագեցու մասին Տէ՛ս նաև **D. Bayarsaikhan**, *The Mongols and the Armenians*, p. 94, ինչպես նաև **նույնի**՝ “Kirakos Gandzakets’i, as a Mongol Prisoner”, *Ming Qing Yanjiu*, vol. 22, 2018, pp. 155–163:

⁵³ Իլխանության մեծ վեզիր Շամս ալ-Դին Ջուվայնիի եղբայրն է՝ հայտնի պատմիչը՝ «Աշխարհակալի պատմությունը» (*Tārīḥ Ḡāhān-Guṣā*) երկի հեղինակը:

⁵⁴ Ալա ալ-Դինը մեղադրվում էր Մամլուքյան իշխանությունների հետ կապի մեջ և իբր պատրաստվում էր մի բեդվին արաբի հետ փախչել: Բայց Աբաղայի արժունիքում տեղի ունեցած «դատավարության» ընթացքում, խարզվանքը պարզվել է. Դաժան ծեծի ենթարկվելով՝ արաբը խոստովանել է, որ իրականում դպիր Իսահակն է իրեն համոզել սուտ վկայություն տալ Ալա ալ-Դինի դեմ: Իսահակը դատապարտվել է մահվան: Տէ՛ս **Bar Hebraeus**, *Chronography*, p. 445:

⁵⁵ **Ibn al-‘Ibrī**, *Tārīḥ muḥtaṣar al-duwal*, §.497-498: Այս դեպքի մասին հաղորդում է նաև բաղդադցի պատմիչ Իբն ալ-Ֆուլատին (մահ. 1323 թ.), միայն քե չի հիշատակում ո՛չ դավադրի անունը և ո՛չ էլ նրա պաշտոնը: Բայց գրում է, որ դատավարությունից (*al-yārgū*) հետո, երբ Ալա ալ-Դինի դեմ մեղադրանքը չի հաստատվել, վերջինս վերադարձել է Բաղդադ, Կարա-Բուղան հեռացվել է Իրաֆից, իսկ նոր շիննա է նշանակվել Tawakāl Bahṣī անունով մեկը՝ մոնղոլ պաշտոնակցի հետ մեկտեղ: Տէ՛ս **Ibn al-Fuwaṭī**, *Al-Hawādīṭ al-ḡāmi ‘a wa-l-taḡārib al-nāfi ‘a fi al-mi ‘a al-sābi ‘a*, bi-taḥqīq Maḥdī al-Naḡm, Bayrūt, 2002, §. 253:

թոյք»⁵⁶, որք են դոնապանք, սրով եւ աղեղամբ»⁵⁷: Այս ֆեշիֆները մեծ հաջողութեամբ կարող էին օգտագործվել նաև Կիլիկիան Հայաստանի հետ դիվանագիտական հաղորդակցութեան մեջ՝ որպէս բանագնացներ⁵⁸ կամ թարգմանիչներ՝ իլխանական արքունիքում հայ դեսպանների ընդունելութեան ժամանակ: Հետաքրքիր է, որ այլուր նույն հեղինակը գրում է հայ իշխանների մասին, «Որ կային ի դուռն Ապաղայ Ղանին», որոնց հետ Հեթումը ծածուկ նամակագրութեան մեջ էր և անհրաժեշտութեան դեպքում Իլխանութեանն առնչվող իր քաղաքական որոշումների շուրջ խորհուրդներ ստանում⁵⁹:

Իլխանական արքունիքի հետ սերտ կապերի մեջ էր նաև Երզնկայի հայոց Սարգիս արքեպիսկոպոսը (մահ. 1277 թ.), որի գործունեութեան մասին ժամանակի հայկական, ասորական և արաբական (մուսուլմաններն անվանել են *Marḥasyā*) սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկութունների ուսումնասիրութեանն առանձին հոգւած ենք նվիրել⁶⁰: Այս Սարգիսը, որը Երզնկայի և գավառի հոգևոր առաջնորդութունը ստանձնել էր 1249 թ., արդեն մոտ 1256 թ. հաջողացրել է իր իշխանութունն օրինականացնող յառիկ ստանալ մոնղոլներից: Ասորի Բար Հեբրեոսի «Եկեղեցական ժամանակագրության» մի հաղորդման (թվագրված 1259-ով) համաձայն՝ Սարգիսն «այնտեղ էին նշանակել քաթարները»⁶¹: Սարգիս համբավի մասին է վկայում այն փաստը, որ վերջինս մասնակցել է 1265 թ. Թավրիզից Կոստանդնուպոլիս գնացած մի «խնամախոսական» առաքելութեան, որի նպատակը Բյուզանդիայի Միքայել VIII Պալեոլո-

⁵⁶ Բառի բացատրությունն ու քեշիքների ձևավորման ու առանձին ուղւաներում դրանց դերի ու նշանակւթյան առանձնահատկւթյունների մասին Տե՛ս F.W. Cleaves, "The Mongolian Names", p. 437, և հատկապէս՝ Ch. Melville, "The Keshig in Iran: The Survival of the Royal Mongol Household", in *Beyond the Legacy of Genghis Khan*, ed. by L. Komaroff, Leiden-Boston, 2006, pp. 135-164:

⁵⁷ Գրիգոր Ակնեցի, Պատմութիւն թաթարաց, էջ 47:

⁵⁸ Հայազգի իշխաններին դիվանագիտական առաքելւթյուններ վստահելու այլ օրինակներ էլ կան աղբյուրներում: Օրինակ, ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Բաղդադի 1258 թվականի գրավման ժամանակ Մուսաբախմ Բի-Ալլան (կառ. 1242-1258 թթ.) խալիֆայի մոտ ուղարկված դեսպանագնացւթյունը ղեկավարել է Պոռ խաղբակյան իշխանը: Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 380 և D. Bayarsaikhan, *The Mongols and the Armenians*, pp. 127-130:

⁵⁹ Գրիգոր Ակնեցի, Պատմութիւն թաթարաց, էջ 59-60:

⁶⁰ Գ. Դանիէլեան, «Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսի գործունէւթիւնն ըստ ԺԳ.-ԺԴ. դարերի մատուցեան սկզբնաղբիւրների», Հայկազեան հայագիտական հանդէս, հ. 38, Պէրոթ, 2018, էջ 181-216:

⁶¹ Gregorii Barhebraei *Chronicon ecclesiasticum*, quod e codice musei Britannici descriptum conjuncta opera ediderunt, Latinitate donarunt annotationibusque theologicis, historicis, geographicis et archeologicis illustrarunt J. B. Abbeloos et T. J. Lamy, tomus II, Parisiis-Lovani, 1874, pp. 732-734, ինչպէս նաև Bar Hebraeus, *Ecclesiastical Chronicle: An English Translation*, tr. by D. Wilmschurst, Piscataway, 2016, p. 262:

գոս (կառ. 1259-1282 թթ.) կայսեր ապօրինի դստերից մեկին՝ Մարիային, Հուլաղու խանին (կառ. 1256-1265 թթ.) կնության բերելն էր: Պատվիրակությունը ղեկավարել է Անտիոքի հույն պատրիարք Եվթեմիոսը, որին, ըստ հայկական աղբյուրների, ուղեկցել են հիշյալ Սարգիսը և Բենեյր անունով վարդապետը: Մինչև բանագնացների վերադարձը, սակայն, Հուլաղուն մահացել է, և Մարիային կնության են տվել իլխանական գահի վրա նրան փոխարինած որդուն՝ Աբադային (կառ. 1265-1282 թթ.). «... և՛ պատրիարքն Անտիոքու, և այլ եպիսկոպոսք ընդ նմա. գոր եբեր տէր Սարգիս Եզնկային եպիսկոպոսն, և Բենեյր վարդապետն. և մկրտեալ զԱբադա դանն՝ ետուն զաղջիկն նմա կին»⁶²:

Իրանի տարածքում ստեղծված մոնղոլական պետությունում՝ Իլխանությունում, վարչարարության և արքունի դիվանատան հիմնական պաշտոնական լեզուն, անշուշտ, մոնղոլերենն էր՝ վերջինիս հարմարեցված ուլգուրական գրով: Պ. Մեյվարտի բնորոշմամբ Իլխանության հիմնադիր Հուլաղուն հավանաբար գիտակցել է կատին Աշխարհի հետ շփումները դյուրացնելու համար իր արքունի դիվանատանը լատին գրագիրներ ունենալու անհրաժեշտությունը⁶³: Եվ, իսկապես, Հուլաղու Աբադա, Արդուն (կառ. 1284-1291 թթ.), Օլջայթու (1304-1316 թթ.) իլխանների օրոք մոնղոլական ուրդուից եվրոպական քաղաքներ ուղարկված գրեթե բոլոր դեսպանությունների խմբում անպայմանորեն ներառված են եղել քրիստոնյա անդամներ՝ ինչպես Արևելքի նեստորական կղերականներ, այնպես էլ եվրոպացիներ՝ ընդ որում հաճախ որպես պատվիրակությունների ղեկավարներ. անգլիացի Դեյվիդ Էջբի, նեստորականներ Սողոմոն Արկաուն (իմա՝ «քրիստոնյա», «նեստորական»), Ռաբբան Սաումա⁶⁴, Իսա

⁶² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 398-399: Մարիան բավական բարձր դիրքի է հասել Աբադայի արժանիքում՝ ստանալով Դեսպինա-Խաթուն («դեսպինա»՝ Δέσποινα, բառը հունարեն նշանակում է «տիրուհի»), «խաթուն»-ը՝ մոնղոլերեն «տիկին») անունը: Դեսպանագնացության վերաբերյալ սկզբնաղբյուրային տեղեկությունների ֆնմարկումը Տե՛ս մեր վերը հիշատակված հոդվածում: Տե՛ս Գ. Դանիելեան, «Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսի գործունեությունն...», էջ 191-192:

⁶³ P. Meyvaert, "An Unknown Letter", p. 250, n 29.

⁶⁴ Մեզ է հասել Ռաբբան Սաումայի և ասորի նեստորական եկեղեցու պատրիարք Յահբալլան Գ-ի (1281-1317 թթ.) կյանքն ու գործունեությունը լուսաբանող վարձագրական երկ՝ գրված անանուն ժամանակակցի ձեռքով, որը հավանաբար ձեռքի տակ ունեցել և օգտագործել է նաև Ռաբբան Սաումայի նոթագրությունները: Ասորերեն բնագիրը հրատարակել է Փ. Բեշանը, ֆրանսերեն է թարգմանել Ժ.-Բ. Շաբոն, անգլերեն՝ Ջ. Մոնթգոմերին (մասնակի) և է. Ա. Ուոլլիս Բաջը: Տե՛ս *Histoire de Mar Jab-Alaha, patriarche, et de Raban Sauma*, ed. par P. Bedjan, Paris-Leipzig, 1895 J.-B. Chabot, *Histoire de Mar Jabalaha III et du moine Rabban Çauma, ambassadeur du roi Argoun en Occident* (1287), Paris, 1895 *The History of Yaballaha III Nestorian Patriarch and of His Vicar Bar Sauma*, trans. from the Syriac and annot. by J.A. Montgomery, New York, 1927 *The Monks of Kublai Khan, Emperor of China or The History of the Life and Travels of Rabban Sawma, Envoy and Plenipotentiary of the Mongol Khans*

Քելեմեչի (իմա՝ «Թարգման»), Սաաբեդդին Արկաուն⁶⁵, ջենովացիներ Տոմմազո Բանկրինոս, Բուսկարելլո Գիզոլֆի, Իզոլ Պիզացի, Տոմմազո Ուզի Սիենացի և այլք⁶⁶:

Հետաքրքիր մի փաստ ևս. մեզ է հասել 1276 թ. Իտալիայի Վիտերբո քաղա-

to the Kings of Europe, and Markos Who as Mar Yahbhallaha III became Patriarch of the Nestorian Church in Asia, tr. from the Syriac by **E. A. Wallis Budge**, London, 1928 (հետայսու՝ **E. A. Wallis Budge**, *Rabban Sauma*): Սույն աշխատանքը գրելիս օգտագործել ենք Բաջի անգլերեն և Ն. Պիգուլևսկայայի ռուսերեն թարգմանությունները: Տե՛ս **Н. В. Пигулевская**, «История мар Ябалахи III и раббан Саумы», *Сирийская средневековая историография. Исследования и переводы*, С. Петербург, 2000, стр. 677-755: Երկի և նրա պատմագրական արժեքի մասին տե՛ս **Н. В. Пигулевская**, «История Мар Ябалахи и Саумы», *Палестинский сборник*, выпуск 2, 64-65, Москва-Ленинград, 1956, с. 97-108, և հատկապես՝ **P. G. Borbone**, «The History of Mar Yahballaha and Rabban Sawma as a Source for Ilkhanid History», in *New Approaches to Ilkhanid History*, ed. by **T. May**, **B. Dashdondog** and **Chr. P. Atwood**, Leiden, 2020, pp. 349-372: Ռաբբան Սաումայի դեսպանագնացության ընթացքի մասին տե՛ս նաև **M. Rossabi**, *Voyager from Xanadu: Rabban Sauma and The First Journey from China to the West*, Tokyo-New York-London, 1992:

⁶⁵ Կարծիք է հայտնվել, որ Ռաբբան Սաումային 1287 թ. եվրոպա ուղեկցած և հետագայում նաև 1290 և 1302 թվականների մոնղոլական դեսպանությունների կազմում ընդգրկված այս «Սաաբեդդին»-ը կարող է նույնացվել ԺԳ դարի հայ մեծահարուստ, խոշոր կալվածատեր Սահմադինին (կամ Սահմատին, ծն. և մահ. թթ. անհայտ): **Г. Г. Микаелян**, *История Киликийского Армянского государства*, Ереван, 1952, стр. 422, сн. 2 **D. Bayarsaikhan**, *The Mongols and the Armenians*, p. 183, n. 249: Վերջինս իր կառուցած և նորոգած շինությունների վրա թողած արձանագրություններում իրեն կոչում է «Սլեմոպ Սահմատին Ավետեց որդի»: Հստ Անիի մի արձանագրության՝ սույն Սահմադինը, ոմն Քերիմեդինը (Քարիմատին, հավանաբար մեկ այլ մեծահարուստ Ումեկի որդին է) և Իլխանության վեզիր (սահիբ դիվան) Շամս ալ-Դին Ջուվայնին 1263 թ. կապալով հանձնառել են Անիի հարկահանությունը: Իսկ ըստ Երևանի Ս. Աստվածածին եկեղեցու պատին նրա թողած արձանագրության՝ 1264թ. գնել է Երևանը՝ «նողով և ջրով»: Տե՛ս **Կ. Կոստանեանց**, *Վիմական տարեգիրք, ցուցակ-ժողովածոյ արձանագրութեանց Հայոց*, Ս.-Պետերբուրգ, 1913, էջ 106, 126, 130, **Հ. Անադյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, Երևան, 1948, էջ 376, **Հ. Մանանդյան**, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության (XI դարից մինչև XV արի սկիզբը)*, հտ. Գ, Երևան, 1952, էջ 265-267, **Թ. Հակոբյան**, *Անիի պատմություն*, հտ. Բ, Երևան, 1988, էջ 320, **Cl. Mutafyan**, *L'Arménie du Levant (XIe-XIve siècle)*, Paris, 2012, p. 472-474 (Սահմադինի, Քերիմեդինի և վերջինիս հայր Ումեկի մասին): Սա նշանակում է, որ 1263-1264 թթ. Սահմադինն արդեն ազդեցիկ ու հարուստ պարոն էր, և հազիվ թե դրանից 40 տարի անց դեռ մոնղոլական դիվանագիտական առաքելությունների մասնակից լիներ: Հետևաբար, այս նույնացումն այնքան էլ հիմնավոր չենք համարում:

⁶⁶ **C. Desimoni**, «I conti dell'ambasciata al Chan di Persia nel MCCXCII», *Atti della Società Ligure di Storia Patria*, t. XIII, 1877, pp. 537-698, **L. Petch**, «Les marchands italiens dans l'empire mongol», *JA*, t. 250, 1962, pp. 549-574, **J. Richard**, «Sol le Pisan: Un aventurier franc gouverneur d'une province mongole?», in *CAJ*, vol. 14, № 1/3, 1970, pp. 186-194, **D. Sinor**, «Interpreters», pp. 315-316 **J. Paviot**, «England and the Mongols (c. 1260-1330)»,

քից Անգլիայի արքա Էդուարդ I-ին (կառ. 1272-1307 թթ.) Հովհաննես և Հակոբ (Johan, Jaques) Վասսալ եղբայրների հղած մի նամակ, որով տեղեկացնում են, որ նպատակ ունեն այցելելու նաև վերջինիս՝ հանձնելու Աբաղա խանի նամակը, ինչպես նաև մեկ այլ նամակ «Հայաստանի թագավորից» (*roy de Hermenie*) ալսինքն Լեոն Բ արքայից⁶⁷: Բացառված չէ, որ եղբայրների գլխավորած պատվիրակության կազմում լինելու նաև հայ պատվիրակ, որին հանձնարարված լինելու արքայի նամակն անձամբ Անգլիայի արքային հանձնել: Ֆրանսիացի պատմիչ Գիյոմ դը Նանժիի (մահ. 1300 թ. հետո) ժամանակագրության մեջ վկայություն կա գուցե հենց հիշյալ դեսպանների՝ Ֆրանսիայի արքա Ֆրիդա III Խիզախի (կառ. 1270-1285 թթ.) արքունիքում ընդունելության մասին: Վերջինս նրանց վրացի (*de secta Georgianorum christiani*) է անվանում, բայց և կասկած հայտնում, թե գուցե ոչ թե դեսպաններ, այլ լրտեսներ էին⁶⁸ չխոսելով դեսպանության որևէ հայազգի անդամի մասին: «Ֆրանսիական մեծ ժամանակագրություններում» (*Grandes Chroniques de France*) նույնպես հաղորդում կա Ֆրիդա արքային 1277 թ. ներկայացած դեսպանների մասին, որոնք ուղարկված էին ոմն «Տարսի թագավորից» (*roy de Tarse*): Աղբյուրը հաղորդում է, որ բանագնացները, որոնք ոչ թաթար էին և ոչ էլ վրացի, Սեն Դենի (Saint Denis) էին եկել իրենց քրիստոնյա արքայի կարգադրությամբ, ով ենթակա էր թաթարներին: Նրանք աջակցություն էին խոստանում Ֆրիդային, եթե վերջինիս ցանկանա «սարակենոսներին» դեմ պատերազմի դուրս գալ: Դեսպաններն այնուհետև ճանապարհ են ընկել Անգլիայի թագավորի մոտ՝ նույնը նաև վերջինիս հաղորդելով⁶⁹: Կարելի է մտածել, թե խոսքը Տարսոնի և հետևաբար Կիլիկիո հա-

⁶⁷ Ch.-V. Langlois, Ch. Kohler, «Lettres inédites concernant les croisades (1275-1307) », *Bibliothèque de l'école des chartes*, tome 52, 1891, p. 56-57.

⁶⁸ Տե՛ս *Chronique latine de Guillaume de Nangis, de 1113 à 1300, avec les continuations de cette chronique, de 1300 à 1368*, tome 1, ed. H. Géraud, Paris, 1843, p. 247-248: Այս մասին տե՛ս նաև J.-P. Abel-Rémusat, «Mémoires», *MIF*, t. 7, pp. 346-347, L. Lockhart, «The Relations between Edward I and Edward II of England and the Mongol Il-Khāns of Persia», *Iran*, vol. 6, 1968, pp. 24-25, J. Paviot, «England and the Mongols», p. 311, P. Jackson, *The Mongols and the West*, p. 174:

⁶⁹ *Les grandes chroniques de France*, publiées pour la Société de l'histoire de France, t. 8: Philippe III le Hardi, Philippe IV le Bel, Louis X Hutin, Philippe V le Long, ed. J. Viard, Paris, 1934, p. 74: Հայտնի է նաև, որ Հայաստանի (Ermenie) թագավորից Էդուարդ I-ի մոտ ուղարկված ինչ-որ դեսպանների համար «անվտանգության երաշխավորագրեր» են գրվել, և վերջիններս վերադարձել են իրենց երկիրը: Տե՛ս *Calendar of the patent rolls preserved in the Public record office / prepared under the supervision of the deputy keeper of the records: Edward I (A.D.1272-1281)*, prepared under the supervision of H.C. Maxwell Lyte, text by J.G. Black London, 1901, p. 265, ինչպես նաև S. Lloyd, *English Society and the Crusade, 1216-1307*, Oxford, 1988, p. 254: Հմմտ. նաև Cl. Mutafyan, *L'Arménie*, p. 163:

յոց թագավորի մասին է: Այնուամենայնիվ, Գիյոմ դը Նանթի մեկնաբանությունը վկայում է, որ սույն դեսպանագնացությունն նպատակներն ու հենց դեսպանների ինքնությունը մինչև վերջ չեն պարզվել՝ տեղիք տալով առասպելաբանական ասեկոսների ու գրույցների: Խորամուտ չլինելով մանրամասնությունների մեջ՝ նշենք, որ վերոհիշյալ հաղորդումը հավանաբար «Տարսի արքայի» մասին եվրոպայում ԺԳ-ԺԴ դարերում տարածված առասպել-վեպի առաջին արձագանքներից է, որը կարծես թե անտեսել են առասպելի տասնյակ տարբերակներն ուսումնասիրած հետազոտողները⁷⁰:

Աղբյուրներից հայտնի է նաև, որ իլխանական դիվանատանը Հուլադուից սկսած աշխատել են ֆրանկ քարտուղարներ և գրագիրներ: Նրանցից ամենահայտնին Ռիկարդոս անունով գրագիրն ու թարգմանիչն էր, որը երկար տարիներ ղեկավարել է լատին նոտարների աշխատանքը⁷¹: Որպեսզի պարզ լինի, թե ինչ կարևոր դեր է ունեցել լատին նոտարատունն արքունի դիվանատան համար, բավական է մի փաստ մատնանշել Հռոմի պապ Կղեմես IV-ի և իլխան Աբաղայի նամակագրությունից: Մասնավորապես, 1267 թ. պապն Աբաղային հղած նամակում ափսոսանքով գրում է, որ ոչ ոք չի կարողացել իր համար վերծանել վերջինիս գրության բովանդակությունը, քանի որ այն, ի տարբերություն նախորդ նամակի, գրված է եղել մոնղոլերեն: 1268 թ. Աբաղան ևս մեկ անգամ է գրում պապին (այս անգամ մոնղոլերեն և լատիներեն տարբերակներով)՝ բացատրելով, որ Թավրիզից իր լատին թարգմանչի (իմա՝ Ռիկարդուսի) ժամանա-

⁷⁰ Անգլիական, գերմանական և ֆրանսիական մի շարք անալոգներով մեզ հասած այս առասպելի առանցքային թեման մի դեպքում «քաթարների արքայի» (կամ վեջինիս եղբոր) և մեկ այլ դեպքում՝ «Դամասկոսի սուլթանի» բրիտանական ընդունելն է իրենց բրիտանյա կնոջ շնորհիվ, որը, ըստ որոշ պատումների, «Հայաստանի արքայի» դուստրն էր: Առասպելը բացատրում է այն կարևոր միջնորդական դերը, որ ուներ Կիլիկյան Հայաստանը Մուսուլմանական Արևելքի և Քրիստոնյա Արևմուտքի փառապաշտության երկխոսության մեջ: *St' u F. Krauze*, "Kleine Publicationen aus der Auchinleck-hs, XI: The King of Tars", *Englische Studien*, XI Band, 1888, S. 1–62 **L. H. Hornstein**, "A Study of Historical and Folklore Sources of the 'King of Tars' ", Ph.D. diss., New York University, 1939, **ճուլյնի**՝ "The Historical Background of The King of Tars", *Speculum*, vol. 16, Issue 4, 1941, pp. 404–414 **ճուլյնի**՝ "New Analogues to the 'King of Tars' ", *The Modern Language Review*, vol. 36, № 4, 1941, pp. 433–442 **R.J. Geist**, "On the Genesis of 'The King of Tars' ", *The Journal of English and Germanic Philology*, vol. 42, № 2, 1943, pp. 260–268 **S. Schein**, "Who was the King of Tars?", in *Medieval Studies in Honour of Avrom Saltmann*, ed. **B-Sh. Albert**, **Yv. Friedman**, **S. Schwarzfuchs**, Ramat-Gan, 1995, pp. 173–187 **T.M. Boyadjian**, "An Armenian Princess, a Mongol, and a Conversion Tale: The Middle English Didactic Romance, *King of Tars*, and its Adaptations", in *Cultural, Linguistic and Ethnological Interrelations In and Around Armenia*, ed. **J. Dum-Tragut**, **U. Bläsing**, Newcastle upon Tyne, 2011 pp. 51–57:

⁷¹ **P. Jackson**, *The Mongols and the West*, pp. 173–174.

կալոր բացակայությունն էր եղել նախորդ նամակը միայն մոնղոլերեն գրելու պատճառը⁷²:

Այսպիսով, չնայած վերևում սկզբնաղբյուրային որոշ փաստեր բերեցինք մոնղոլական արքունիքի հայազգի ծառայողների՝ քեշիքների, թարգմանիչների և բանագնացների մասին, բնավ չենք կարծում, որ հայոց արքաների և Իրանի մոնղոլ տիրակալների միջև դիվանագիտական նամակագրությունը կարող էր վարվել հայերենով և կամ մոնղոլերենով: Շատ ավելի հավանական է թվում այն ենթադրությունը, որ հայոց արքունիքի և մոնղոլական Իլխանություննամակագրությունը տարվում էր որևէ երրորդ՝ միջանկյալ լեզվով (*lingua franca*), որի դերում կարող էր հանդես գալ լատիներենը, որին տիրապետողների պակաս հայոց դիվանատանը վստահաբար չկար: Անշուշտ, հնարավոր է, և Հինգուշահ Նախապանի քարտուղարության ձեռնարկում մեզ հասած և վերը քննարկված դիմումաձևն էլ վկայում է, որ նամակների նախօրինակները կարող էին գրվել պարսկերենով և հետո միայն լատին նոտարները դրանք կարող էին լատիներեն թարգմանել: Նամակների նախօրինակները, ինչպես եվրոպացի գահակալների հետ գրագրության մեջ, որոշ դեպքերում կարող էին ուղեկցել լատիներեն թարգմանությունները:

(Շարունակելի)

GAGIK DANIELYAN

OFFICIAL CORRESPONDENCE AND DIPLOMATIC GIFTS IN THE ARMENIAN-MONGOL RELATIONS (PARTS 1 AND 2)

Keywords:

Cilician Armenia, Mongol Ilkhanate of Iran, official correspondence, Muḥammad ibn Hindušāh Nahḡawānī, envoys, interpreters, diplomatic gifts.

The Mamluk chancellery manuals and administrative encyclopedias are not the only sources for the study of the official correspondence between Cilician Armenia and neighboring non-Christian powers.

Another important source has come down to us from the 14th century. It yields some insights into the protocol of diplomatic correspondence between the ruling authorities of the Mongol Ilkhanate of Iran and the Armenian kings of Cilicia, as well

⁷² Այս նամակի հրատարակությունը վերն արդեն հղել ենք: Տե՛ս **Eu. Tisserant**, « Une lettre », pp. 547-556:

as the Armenian catholicoi and clergy. That source is *Dastūr al-kātib fī ta'yīn al-marātib*, a chancellery handbook written in Persian by *Muḥammad ibn Hindušāh Nahǧawānī* (d. 1376) also known under the nickname of *Šams Munšī*.

Along with the important data on socio-economic and public life in Iran and adjacent countries under the rule of the Ilkhanid and Jalayirid dynasties, *Dastūr al-kātib* also contains invaluable material on the organisation and structure of the state system and administrative offices (*dīwāns*), including the state chancery (*dīwān inšāʿ*). Being a high-qualified clerk and secretary in the royal chancery, *Nahǧawānī* provides significant information on the activities of the military and financial offices, gives numerous examples of documents issued by them, describes the functions and duties of the state officials. Despite its high merits, the manual has never been thoroughly studied and fully translated to any language.

In the first part of the article, the author discusses the intriguing information in *Dastūr al-kātib* (so far overlooked by the scholars of the history of Cilician Armenia) concerning the formulae of correspondence of the Mongol *ilkhans* with the Armenian ruling elites.

The second part deals with the issue of language used in the Armenian-Mongol diplomatic correspondence. Even though no document of the Armenian-Mongol correspondence has come down to us, the preserved letters exchanged between European monarchs and Mongol authorities, as well as the information we possess on the Ilkhanid chancery practices, allow us to make some assumptions regarding the language of Armenian-Mongol official correspondence. Most likely, Latin was used as *lingua franca* in diplomatic communication in parallel with Persian. Medieval sources also contain interesting reports on Christian, including Armenian, scribes, envoys and interpreters employed by the Ilkhanid court in its contacts with the Latin world.

(To be continued)

ГАГИК ДАНИЕЛЯН

ОФИЦИАЛЬНАЯ ПЕРЕПИСКА И ДИПЛОМАТИЧЕСКИЕ ДАРЫ
В АРМЯНО-МОНГОЛЬСКИХ ОТНОШЕНИЯХ
(ЧАСТИ 1 И 2)

Ключевые слова: Киликийская Армения, монгольский Ильханат Ирана, официальная переписка, Мухаммад ибн Хиндушах Нахчивани, посланники, переводчики, дипломатические дары.

Мамлюкские канцелярские руководства и административные энциклопедии – отнюдь не единственные источники для изучения официальной переписки между Киликийской Арменией и соседними нехристианскими государствами.

До нас дошел еще один важный источник XIV века, который дает некоторое представление о протоколе дипломатической переписки правящих кругов монгольского Ильханата Ирана с армянскими царями Киликии, а также с армянскими католикосами и духовенством. Это – «*Дастур аль-катиб фи та'йин аль-маратиб*», канцелярский справочник, написанный на персидском языке Мухаммадом ибн Хиндушахом Нахчивани (ум. в 1376 г.), также известным под прозвищем Шамс Мунши.

Наряду с важнейшими данными о социально-экономической и общественной жизни Ирана и соседних стран под властью династий Ильханидов и Джалаиридов, «*Дастур аль-катиб*» содержит бесценный материал об организации и структуре государственной системы и административных учреждений (*dīwāns*), включая государственную канцелярию (*dīwān inšā'*). Будучи высококвалифицированным письмоводителем и секретарем ханской канцелярии, Нахчивани предоставляет значительную информацию о деятельности военного и финансового ведомств, приводит многочисленные примеры издаваемых ими документов, описывает функции и обязанности государственных чиновников. Несмотря на свои высокие достоинства, канцелярское пособие Нахчивани почти не изучено и не переведено полностью ни на один язык.

В первой части статьи рассматривается любопытная информация в «*Дастур аль-катиб*»-е, до сих пор упущенная из виду исследователями истории Киликийской Армении, касающаяся формуляра переписки монгольских ильханов с армянскими правящими элитами.

Во второй части затрагивается вопрос о языке армяно-монгольской дипломатической переписки. Несмотря на то, что до нас не дошло ни одного доку-

мента армяно-монгольской переписки, сохранившиеся письма, которыми обменивались европейские монархи и монгольские власти, а также информация, которой мы располагаем о работе канцелярии Ильханидов, позволяют нам сделать некоторые предположения относительно языка армяно-монгольской официальной переписки. Скорее всего это была латынь, которая использовалась как *лингва франка* в дипломатической коммуникации параллельно с персидским языком. Средневековые источники также содержат интересные сообщения о христианских, в том числе армянских, писцах, посланниках и переводчиках, нанятых двором Ильханидов в его контактах с латинским миром.

(Продолжение в следующем номере)